


Գյումրիի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղերի կազմակերպման ռազմավարական ծրագիր



Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրիի համայնքի ավագանու
2019 թվականի փետրվարի 12-ի N 24-Ա որոշման

Գյումրիի համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղերի կազմակերպման ռազմավարական ծրագիր




Ավտոկայանատեղերի կազմակերպման ռազմավարական ծրագիր



Ֆինանսավորող՝

Վերակառուցման և
Զարգացման Եվրոպական
Բանկ (ՎԶԵԲ)



Հաճախորդ՝

Գյումրու քաղաքապետարան




Ֆինանսավորող՝ ՎԶԵԲ

Նախագիծ՝

Գյումրու քաղաքային ճանապարհների և
փողոցների լուսավորության նախագիծ –
Ավտոկայանատեղերի ռազմավարություն և
գործողությունների պլան

Նախագիծ ID 67570



Ավտոկայանատեղերի ռազմավարության վերջնական
հաշվետվություն



Transportation Engineering Ltd.
Jerusalem, Israel

«ՌՕՄ թրանսփորեյշն Էնջինիրինգ» ՍՊԸ



Grant Thornton

An instinct for growth

«Գրանթ Թորնթոն Քնսալթինգ» ՓԲԸ

Բովանդակություն

Ամփոփում	5
1 Ներածություն	17
1.1 Նախաբան	17
1.2 Ծրագրի նպատակ	18
1.3 Հաշվետվության կառուցվածքը	18
2 Ինչպես կառուցել ճիշտ ավտոկայանատեղերի ռազմավարություն	20
2.1 Ներածություն	20
2.2 Ռազմավարություն և նպատակներ	23
2.3 Մարտավարական ասպեկտներ	25
2.4 Գործառնական ասպեկտներ	30
3 Ընտրված քաղաքների տիպային օրինակներ	35
3.1 Ներածություն	35
3.2 Երևան, Հայաստան	36
3.3 Բաթումի, Վրաստան	45
3.4 Հայֆա, Իսրայել	57
3.5 Իքսել, Բելգիա	62
3.6 Օսլո, Նորվեգիա	68
4 Գյումրու ապագան առանց ավտոկայանման ռազմավարության	77
4.1 Բազային տարվա (2018 թ.) դրության ամփոփում	77
4.2 Այլընտրանքային աճի սցենարներ - Հորիզոն 2028	80
4.3 Եզրակացություն	89
5 Գյումրիում ավտոկայանման առաջարկվող ռազմավարություն	91
5.1 Ռազմավարական որոշումներ	91
5.2 Մարտավարական բնութագրիչներ	95
5.3 Գործառնական բնութագրիչներ	111

5.4	Ռազմավարության ամփոփում	122
6	Ընտրված ավտոկայանման ռազմավարության վերլուծություն	123
6.1	Երկարաժամկետ կենսունակություն.....	123
6.2	Սոցիալ-ժաղովրդագրական ազդեցություն	123
6.3	Ֆինանսական կենսունակություն	124
6.4	Կիրարկման կենսունակություն	142
6.5	Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.....	142
6.6	Ռիսկեր	143
6.7	Ազդեցության ամփոփում.....	147
7	Հավելված	148
7.1	Կիրարկման տեխնոլոգիական մակարդակի վերլուծականը	148

Հապավումներ

ՎԶԵՔ	Վերականգնման և Զարգացման Եվրոպական Բանկ
ԱԶԲ	Ասիական Զարգացման Բանկ
ՔԶԾ	Քաղաքի զարգացման ծրագիր
ՆԻԹ	Նախագծի իրականացման թիմ
ՌՕՄ	ՌՕՄ թրանսփորթեյշն Էնջինիրինգ ՍՊԸ
ԳԹ	Գրանթ Թորնթոն Քոնսալթինգ ՓԲԸ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՔԽՏԱ	Քաղաքականության և խորհրդատվական տեխնիկական աջակցություն
ԿԲՀ	Կենտրոնական բիզնես հատվածներ
ԱՏՀ	Աշխարհագրական տեղեկատվական համակարգ
ԳՏՀ	Գլոբալ Տեղորոշման Համակարգ
ՏՀԶԿ	Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության
Կմ	Կիլոմետր
Կմ/ժ	Կիլոմետր ժամում
ԱՎ	Ավտոկայանատեղերի վերահսկիչներ
ՀՏ	Հանրային տրանսպորտ


Ամփոփում

Գյումրու ավտոկայանման ռազմավարությունն ու Գործողությունների պլան նախագիծը կառավարվում է Գյումրու համայնքապետարանի կողմից և ֆինանսավորվում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի («ՎԶԵԲ») կողմից՝ Խորհրդատվական ծառայություններն իրականացվել են ՌՕՍ թրանսփորթեյշն Էնջինյիրինգ ՍՊԸ-ի և Գրանթ Թորնթոն Քնսալթինգ ՓԲԸ-ի համատեղ ծեռնարկության կողմից՝ սկսած 2018 թ. հունվարից։ Այս վերջնական հաշվետվությունը ներկայացվում է հաճախորդին՝ որպես հավաքագրված տվյալների և տեղեկատվության սինթեզ, ինչպես նաև խորհրդատուների կողմից մշակված առաջարկվող ռազմավարություն։ Այս վերջնական ռազմավարության հաշվետվությունը հիմք կհանդիսանա ապագա Գործողությունների պլանի մշակման համար, որը կներկայացվի հաճախորդին մինչև վերջնական ռազմավարության հաշվետվության հաստատումը։

Այս հաշվետվությունը սկսվում է նախագծի նախադրյալներին և նպատակներին նվիրված կարճ քննարկումով, ինչպես նշվել է տեխնիկական առաջադրանքում և հաստատվել է համապատասխան շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների միջոցով։ Այս հաշվետվության հիմնական նպատակն է՝

- Երկարաժամկետ, հետևողական ավտոկայանման ռազմավարության (փոփոցային և արտափոփոցային կայանատեղերի առաջարկ և համապատասխան սակագներ) մշակում,

Հաջորդ բաժինն ընդգծում է, թե ինչպես կարելի է կառուցել բարդ կառուցվածքով կայուն ավտոկայանման ռազմավարություն, որը կծառայի որպես ուղեցույց, Շրջանակն ընդգրկում է երեք փուլ՝ նախադրյալներ, ավտոկայանման ռազմավարություն և կատարում։ Նախադրյալները տրամադրվել են հաճախորդին Դիագնոստիկ հաշվետվության մեջ։ Գյումրու Ավտոկայանման ռազմավարության տեսլականը ներառում է երեք քայլ, որոնցից յուրաքանչյուրն ունի բազմակի բաղադրիչներ։ Նախ, սահմանվում են ռազմավարական նպատակները։ Դրանք կազմված են տրանսպորտի, երթևեկության և եկամուտների գոյացման նպատակներից, որոնք պետք է ի սկզբանե հստակորեն սահմանվեն։ Հաջորդը, մարտավարական բաղադրիչների ներկայացումն է։ Դրանք սահմանում են ռազմավարության աշխարհագրությունն ու գոտևորումը, ժամանակահատվածն ու սակագները։ Գործառնական ասպեկտները, որոնք ուղղված են ռազմավարության գործնական իրականացմանը, ներկայացված են երրորդ քայլով։ Այս փուլում նախանշված են տեխնոլոգիական մակարդակը, կիրարկման տեսակը, կառավարման կառուցվածքը, անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները և այլն։ Այս շրջանակի Իրականացում հատվածը դիտարկում է առաջարկվող ռազմավարության հետևանքները տարբեր համապատասխան ասպեկտներում։ Այս քայլը զուգակցվում է այն վերափոխման գործընթացի հետ, որտեղ սխալները և թերությունները վերագնահատվում են ռազմավարության սկզբնական փուլում և անհրաժեշտության դեպքում ուղղվում են։ Վերջապես, Գործողությունների պլանը սահմանում է ռազմավարության հաջող իրականացման համար անհրաժեշտ մանրամասն քայլերը։ Շրջանակը կիրառում է A-B-C չափիչ գործիք, որտեղ A-ն ներկայացնում է ուժեղ միջամտության միջոցներ, և C-ն ներկայացնում է նվազագույն միջամտության միջոցներ։



Քաժին 3-ը ներկայացնում է տարբեր քաղաքների ավտոկայանման ռազմավարության հինգ դեպքերի ուսումնասիրության խորը վերլուծություն Քաղաքներն են Երևանը (Հայաստան), Բաթումին (Վրաստան), Հայֆան (Իսրայել), Իջսելը (Բելգիա) և Օսլոն (Նորվեգիա) Այս բաժնի նպատակն է ապահովել տարբեր տեսակի ավտոկայանման ռազմավարությունների համապարփակ համադրություն, որոնք Գյումրու ապագա ռազմավարության համար կարող են առաջարկել ընդհանուր պատկերացումներ և համեմատելի պարամետրեր 5-րդ բաժնում ներառվել են Գյումրու ավտոկայանման ռազմավարության յուրաքանչյուր հարթության համար քաղված համապատասխան դասերը

Դիագնոստիկ փուլում իրականացվել է լայնածավալ վերլուծություն ավտոկայանատեղերի ներկայիս առաջարկի և պահանջարկի գնահատման համար Ավտոգնահատարների 30 կմ-անոց հատվածում, որտեղ իրականացվել են հարցումներ փողոցների երկու կողմերով (ընդամենը 60 կմ), մոտավորապես 8.300 ավտոկայանատեղեր են հայտնաբերվել Մեկ կիլոմետրի համար ավտոկայանատեղերի առաջարկը միջին հաշվով կազմում է մոտ 150 Մոտավոր հաշվարկով 14 քնակչի հաշվով 1

ավտոկայանատեղ կա որոշ խիտ տարածքներ դրսևորել են սահմանափակ հնարավորություններ, Ավելին, ենթակառուցվածքների մեծ մասը գտնվում է վատ վիճակում, սակայն որոշ տարածքներում իրականացվում է վերականգնում.

Գործալ առումով չկա ավտոկայանատեղերի պակասորդ, քանի որ զբաղվածության մակարդակը ողջամտության սահմաններում է: Հիմնական գոտիներում և որոշակի ժամանակահատվածներում, այնուամենայնիվ, զբաղվածության բարձր մակարդակ և առաջարկի պակաս է դիտվում Այնպիսի վայրերում, ինչպիսիք են Անիի շրջանը, քաղաքապետարանը, Հայուհու հրապարակը կամ Շուկայի տարածքը, զբաղվածությունը հասնում է 80 կամ ավելի տոկոսի, հատկապես պիկ ժամերին, Հավելյալ տեղեկատվություն կարելի է գտնել Դիագնոստիկ հաշվետվության մեջ՝ 8.2 և 8.3 բաժիններում:

Բաժին 4-ը վերաբերում է այն տարբեր սցենարներին, որոնք կարող են ի հայտ գալ Գյումրիում գալիք տարիներին, եթե համայնքապետարանը որոշի չիրականացնել ավտոկայանման ռազմավարություն: Նախ, տրվում է քաղաքի ներկա իրավիճակի մասին ամփոփ նկարագիր 2018 թ-ի դրությամբ. «Հորիզոն 2028» տերմինի ներքո մանրամասն նկարագրվում են երկու սցենարներ, որոնք ընդգծում են Գյումրու հնարավոր աճի սցենարները. Առաջին սցենարը («սովորական») ենթադրում է, որ աճը դանդաղ և բավականին լճացած կլինի Այս սցենարը կանխատեսում է ավտոկայանման իրավիճակի մի փոքր վատթարացում և առաջարկում է իրականացնել համապարփակ լուծում: Երկրորդ սցենարը («լավատեսական») կանխատեսում է բնակչության և տնտեսության վիճակի ավելի մեծ աճ Այս սցենարում առկա է ավտոկայանման պայմանների զգալի վատթարացում, որը կուղեկցվի խցանումների և անվտանգության խնդիրների ավելացմամբ. Տվյալ սցենարի դեպքում կայուն ավտոկայանման ռազմավարությունն առաջարկվում է պարտադիր կերպով Խորհրդատուն հաջորդիվ առաջարկում է ադապտացնել աճի սցենարը, քանի որ որոշ միջոցառումներ, ինչպես ազգային, այնպես էլ տեղական, արդեն իսկ իրականացվել են Գյումրի համայնքի ամրապնդման և բացասական աճի դեմ, ինչի ակունատեսն ենք եղել վերջին տարիներին

Հաշվետվության հիմնական մասը 5-րդ բաժինն է, որտեղ մանրամասն քննարկվում է Գյումրու ավտոկայանման առաջարկվող ռազմավարությունը Առաջարկությունները բաժանված են երկու մասի՝ կարճաժամկետ (2019-2023) և երկարաժամկետ (2024-2028)

Ռազմավարական հարթություն

Տրանսպորտային նպատակներ

Մասնավոր մեքենաների զգալի քանակն ու վատ զարգացած տրանսպորտային ցանցի առկայությունը չեն խրախուսում անցումն այլընտրանքային տեսակների Կարճաժամկետ ռազմավարությունը նպատակաուղղված չէ տրանսպորտի վրա ազդելուն: Բարձր պահանջարկի և գերբեռնվածության պայմաններում երկարաժամկետ ռազմավարությունը ներառում է որոշակի անցում դեպի այլընտրանքային տեսակների, ինչպիսին է հասարակական տրանսպորտը:

Երթևեկության և հասանելիության նպատակներ

Ներկայումս առկա է անբարենպաստ իրավիճակ, երբ ավտոկայանատեղ փնտրող վարորդները հանդիպում են ճանապարհային երթևեկության, անվտանգության և հասանելիության ռիսկերի, որոնք վտանգավոր են հատկապես հետիոտների համար. Ավտոմեքենաները կայանվում են անօրինական կերպով արգելափակում են ճանապարհները, խաչմերուկները և հետիոտնային քայլուղիները Հետևաբար, նպատակն է բարելավել երթևեկության հոսքը բոլոր ճանապարհներից օգտվողների համար Վարորդները պետք է ի վիճակի լինեն վարել փողոցներում, որտեղ կայանված ավտոմեքենաները չեն փակի ճանապարհները, Նմանապես, կայանված մեքենաները չպետք է խոչընդոտեն կամ անվտանգության այլ խնդիրներ ստեղծեն այլ ճանապարհներից օգտվողների համար

Եկամտի գոյացում


Ներկայումս Գյումրու ավտոկայանման ռազմավարությունն ամբողջությամբ ֆինանսավորվում է հմայքի կողմից որպես սուբսիդավորում Հիմք ընդունելով այն փաստը, որ ներկայումս ավտոկայանումն ամբողջ քաղաքում կրում է անսահմանափակ և անվճար բնույթ, դժվար կլինի վճարովի ավտոկայանման սխեմայի ներմուծումը, առանց բնակչության կողմից բացասական արձագանքների Կարճաժամկետ առաջարկությունը կայուն եկամտի ստեղծման տարբերակի ներկայացումն է Ռազմավարությունը համայնքապետարանին զգալի եկամուտ չի բերի, սակայն այն կկանխի ավտոկայանման ներկայիս սխեմայի տարեկան վնասը Երբ ռազմավարությունը հաջողությամբ ադապտացված կլինի, համայնքապետարանը պետք է նախատեսի ավելի ագրեսիվ սակագնային քաղաքականություն, որի հիմքում ընկած կլինի եկամտի գոյացման մոտեցումը

Մարտավարական հարթություն


Աշխարհագրական շրջանակ

Փողոցային ավտոկայանման համար ռազմավարությունը կենտրոնանում է մայրաքաղաքի խոշոր բանուկ հատվածների վրա, որտեղ ճանապարհային երթևեկությունն առավել վտանգավոր է, Շուկայի և «Կոմայրի» պատմամշակութային կենտրոնի հատվածներում առկա են մի շարք պոտենցիալ տարածքներ, որոնք կարող են վերածվել ավտոկայանատեղերի՝ Ստորև նկարագրված քարտեզներում ցույց են տրված այն տարածքները, որտեղ կիրառվելու է ռազմավարությունը, և կարող են տեղակայվել արտափողոցային ավտոկայանատեղեր:

Փողոցային՝




Արտափողոցային՝




Հետազոտության փուլում բարձր զբաղվածություն է գրանցվել հատկապես Շուկայի և «Կումայրի» պատմամշակութային կենտրոնի տարածքներում ՎՀԵԲ-ի կողմից իրականացվող պլանավորված ճանապարհների վերականգնման և հետիոտնացման ծրագրի շնորհիվ պետք է նախատեսվեն արտափողոցային ավտոկայանատեղեր, որոնք կգտնվեն այդ վայրերից քայլելու հեռավորության վրա:

Ավտոկայանման գոտիներ

Ռազմավարությունը ավտոկայանատեղերի գոտևորումը կիրականացնի երկու փուլով: Առաջին փուլում կլինի մեկ՝ Կապույտ գոտի Այստեղ կներառվեն մեծ պահանջարկ ունեցող, ինչպես նաև նրանց անմիջական հարակից տարածքները Հատկանիշներից է՝ վճարովի կայանում ժամային, օրական, ամսական կամ տարեկան բաժանորդագրությունների միջոցով Ձկա ժամային սահմանափակում Վարորդներին, ովքեր ունեն ավտոկայանատեղի վավեր պիտակներ, թույլատրվում է ավտոմեքենան կայանել այս գոտու ցանկացած վայրում: Գոտին ընդգրկում է ընդամենը 27 կմ ճանապարհ՝ Ստորև ներկայացված քարտեզները ցույց են տալիս Գյումրիում առաջարկվող Կապույտ գոտու տարածքները



Երկրորդ փուլում խորհրդատուն առաջարկում է ընդլայնել ավտոկայանատեղերի սխեման ներկայացնելով երկրորդ՝ Կարմիր գոտին՝ Այս գոտին կներառի ամենամեծ պահանջարկ ունեցող ճանապարհները, որտեղ զբաղվածությունը հասնում է իր գագաթնակետին: Վարորդները կարող են այդ գոտիներում մեկ վայրում կայանել ավտոմեքենան առավելագույնը երեք ժամով՝ զուգահեռ կիրառելով կայանման սխեմայի ժամանակահատվածը (09 00 19 00)՝ Նպատակն է կենտրոնական հանգույցների կողքին խրախուսել կարճաժամկետ այցելությունների կայանումը: Ընդլայնումը կներառի համապատասխան տեխնիկայի արդիականացում պատշաճ կիրարկում ապահովելու համար Այսպիսով, քաղաքապետարանը պետք է նախատեսի նման ընդլայնման շահութաբերությունը միայն այն ժամանակ, երբ Կապույտ գոտու սխեման հաջողությամբ կիրականացվի: Ծրագիրն ընդգրկում է 19 9 կմ ճանապարհի Կապույտ գոտու և 7 1 կմ ճանապարհի Կարմիր գոտու համար՝ Ստորև բերված քարտեզները ներկայացնում են առաջարկվող երկու գոտիների սխեման:



Ժամանակահատված

Ուղղակիության երկու փուլերի համար ավտոկայանատեղերը պետք է կարգավորվեն 09:00-19 00 ընկած ժամերի ընթացքում, շաբաթական 5 օր՝ երկուշաբթիից ուրբաթ Այս ժամանակահատվածից դուրս ոչ մի վճար չի պահանջվում

Սակագների կառուցվածք

Սակագների կառուցվածքը հաշվի է առնում կայանման սխեմայի ներդրման և պահպանման ծախսերը և նպատակ ունի առաջարկել համապատասխան սակագներ, որպեսզի սխեման մնա կայուն առանց սուբսիդավորում ստանալու Այս միջոցառումների և բազմաթիվ այլ փոփոխականների համակցությամբ՝ ներառյալ ավտոկայանման սովորությունների հարցման, տնտեսական վերլուծության տվյալները, և համեմատելով Երևանում սակագների կառուցվածքի և իրավական դաշտի հետ՝ խորհրդատուն բաժանեց սակագները փողոցային և արտափողոցային ավտոկայանման երկու կատեգորիաների՝

Փողոցային ավտոկայանում

Խորհրդատուն առաջարկում է սակագների հետևյալ կառուցվածքը, որի միջոցով հստակորեն խթանվում է տարեկան բաժանորդագրությունը

Բաժանորդագրություն	Արժեք (ՀՀ դրամ)
Ժամային	100
Օրական	300
Ամսական	1500
Տարեկան	7500

Արտափողոցային ավտոկայանում

Արտափողոցային ավտոկայանատեղերի հիմնական նպատակն է բավարարել բարձր պահանջարկը կոնկրետ տարածքներում, ինչպիսիք են Շուկան և «Կոմայրի» պատմամշակութային կենտրոնը: Հետևաբար, այդ ավտոկայանատեղերում առաջարկվող բաժանորդագրությունը պետք է իրականացվի միայն օրական պիտակների միջոցով Առաջարկվող օրական կայանման սակագինը արտափողոցային ավտոկայանատեղում 800 ՀՀ դրամ է՝

Գործառնական հարթություն

Տեխնոլոգիական մակարդակ

Պիտակները կարելի է ձեռք բերել ֆիզիկապես քաղաքի բոլոր կրպակներում կամ սմարթֆոնների հատուկ հավելվածի միջոցով, որտեղ օգտվողները կարող են վճարել ժամային, օրական, ամսական կամ տարեկան բաժանորդագրությունների համար. Տույժերի վճարումը կարող է կատարվել բանկերում, փոստային բաժանմունքներում կամ բջջային հավելվածով

Մեկ գոտի ունեցող ավտոկայանման սխեմայի պատշաճ կիրարկում երաշխավորելու համար ավտոկայանատեղերի վերահսկիչները պետք է ունենան պլանշետներ, որոնք հագեցած կլինեն պետհամարանիշների գրանցման համակարգով Հետագա ընդլայնումը երկգոտի սխեմայի

կապահանջի տեխնոլոգիական արդիականացում՝ ապահովելու պատշաճ համապատասխանություն սխեմայի հետ՝

Կիրարկում

Ծրագրի մեկնարկի և անցումային շրջանի փուլերում, որը կտևի մոտ վեց ամիս, կիրարկումը պետք է լինի «մեղմ», այսինքն՝ չպետք է լինեն տուգանքներ, այլ պետք է իրականացվի ավտոկայանման նոր սխեմայի վերաբերյալ վարորդների իրազեկում, շրջայցերը սկզբնական շրջանում պետք է կատարվեն բարձր հաճախականությամբ, ամբողջ աշխարհագրական շրջանակը պետք է այցելել օրական 2-3 անգամ, անցումային շրջանից հետո խորհրդատու առաջարկում է տուգանքի չափը սահմանել 2000 ՀՀ դրամ՝ համապատասխան օրենսդրական փոփոխությունից հետո, որի համար վարորդները կարող են ստանալ արագ վճարման դեպքում զեղչեր, Ավելի ուշ Կարմիր գոտում կիրարկումը պետք է ավելի խիստ լինի՝ օրական 4 անգամ

Բացառություններ

Ծարժունակության խնդիրներ ունեցող անձինք սխեմայի գործարկումից սկսած պետք է կարողանան կայանել իրենց մեքենան բոլոր գոտիներում անվճար: Բացի այդ, համայնքապետարանը պետք է նաև անվճար ավտոկայանատեղեր ներդնի տեղի բնակիչների համար, ովքեր ապրում են տվյալ գոտում:

Կառավարում

Համայնքապետարանի կազմում պետք է ստեղծվի ավտոկայանատեղերի կառավարման միավոր, որը կստանձնի վարչական պարտավորություններ, ինչպիսիք են ավտոկայանատեղերի և ստանդարտների ստեղծման որոշումներ Գործարկման, կարգավորման, գնագոյացման, կիրարկման ստանդարտների և տեղեկատվության հավաքագրման թույլտվությունների և լիցենզիաների տրամադրումը պետք է սահմանվի և ղեկավարվի ներքին միավորով Հետագայում խորհրդատու առաջարկում է գործառնական հանձնարարականներ տալ մասնավոր կապալառուի՝ Գործառնական խնդիրները ներառում են ավտոկայանատեղերի ֆիզիկական ստեղծում, նշանների և գծանշումների տեղադրում, ավտոկայանատեղերի գործարկում և պահպանում, ավտոկայանատեղերի վերահսկիչների նախապատրաստում, կիրարկում և տուգանքների հավաքագրում, վաճառքի իրականացում, հաշվապահական հաշվառման իրականացում և հաշվետվությունների կազմում, իրազեկման բարձրացմանն ուղղված քարոզարշավի կառավարում:

Կանոնակարգում

Իրավական կարգավորման մակարդակը պետք է հաշվի առնվի մինչև ռազմավարության իրականացումն ու կիրարկումը Կարգավորման շրջանակներն արդեն առկա են ազգային մակարդակով, որոշակի օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով, որոնք նույնպես կիրառելի են Գյումրու համար Ընդունված ավտոկայանման քաղաքականության հեշտ իրականացման համար պահանջվում են Գյումրի համայնքի ավագանու լրացուցիչ որոշումներ՝ ավտոկայանատեղերի համայնքային կանոնակարգերի ձևաչափով

Հանրային իրազեկում

Ավտոկայանման սխեմայի իրականացման վերաբերյալ հասարակության պատշաճ իրազեկումը կարևոր է դրա հաջողության համար. Շահագրգիռ կողմերը պետք է ունենան որոշակի տարբերակներ. որոնցով կարող են կապ հաստատել և հարցեր տալ՝ Բացի այդ, համայնքապետարանը պետք է անցկացնի քարոզարշավ, որը կարող է ներառել վահանակներ և այլ համապատասխան մեթոդներ՝ հանրությանը տեղեկացնելու ամենակարևոր փոփոխությունների մասին. որոնք տեղի պիտի ունենան:

Ամփոփում

Ստորև ներկայացված աղյուսակն ամփոփում է ամբողջ ավտոկայանման սխեման. ինչպես կարելի է դիտել 5.4-րդ բաժնում A, B և C տառերը ներկայացնում են վերոնշյալ չափման գործիքը՝ մատնանշելով յուրաքանչյուր հարթության համար համապատասխան միջամտության մակարդակը:

Ժամանակագրություն							
		Ներկա (2018)		Կարճաժամկետ (2019-2023)		Երկարաժամկետ (2024-2028)	
Հ ա ր թ ո ւ թ յ ւ ն	Ռազմավարական						
	Տրանսպորտ		Չկա անցում ՀՑ-ի	C	Չկա անցում ՀՑ-ի	B	Մասնակի անցում ՀՑ-ի
	Երթևեկություն և հասանելիություն	և	Չկա անցում ՀՑ-ի	A	Կա անցում ՀՑ-ի	A	Կա անցում ՀՑ-ի
	Եկամտաբերություն		Բարձր, ստատիստիկորեն	B	Կոյում	A/B	Գաղտնի/հավանա
	Մարտավարական						
	Աշխարհագրական ընդգրկում		Չկա խորանային տարրեր	B	Որոշակի թիրախային տարածք	B	Որոշակի թիրախային տարածք
	Գոտևորում		Չկա Գոտեման	C	Մեկ գոտի	B	Երկու գոտի
	Ժամկետներ		Չկա մանրամասնություններ	B	Մասնակի մանրամասնություններ	B	Մասնակի մանրամասնություններ
	Մակագների կառուցվածք		Չկա մակագների կառուցվածք	C	Ստատիկ, պարզ, միաբնիկ	B	Ստատիկ, միջին մակագներ
	Գործառնական						
	Տեխնոլոգիական մակարդակ		Չկա տեխնոլոգիա	B	Ոչ ենթակառուցվածքային տեխնոլոգիա	B	Մասնակի/ենթակառուցվածքային տեխնոլոգիա
	Կիրառելի		Չկա կիրառելի	B	Հաճախակի կիրառելի, ցածր տողանքներ	B	Հաճախակի կիրառելի միջին տողանքներ
	Բացառություններ		Կա Բացառություններ	B	Հաճախումներ, տեղի բնակիչներ	B	Հաճախումներ, տեղի բնակիչներ
	Կառավարում		Չկա կառավարում	B	Մասնակի պատվիրակում	B	Մասնակի պատվիրակում
	Կանոնակարգում		Չկա Կոդիֆիկացիաներ	A	Կարևոր դրամական փոփոխություններ	B	Մեծ չափով դրամական փոփոխություններ
	Հանրային իրազեկում		Չկա	B	Մեջին	B	Միջին/բացառական

Ֆինանսական ազդեցություն

Հաշվի առնելով կանխատեսվող ավտոմեքենաների քանակը՝ վերլուծվել է 2 սցենար «Սովորական» և «Լավատեսական»

Ծրագրի համար պահանջվող ընդհանուր ներդրումը հաշվարկվել է 100,388 և 105,388 ԱՄՆ դոլար «սովորական» և «լավատեսական» սցենարների համար համապատասխանաբար, որի 65%-ը կազմում են հիմնական միջոցները, իսկ 15%-ը ոչ նյութական ակտիվները Պայմանական ներդրումների համար նախատեսվում է 20%

Ոչ մի պարտքային ֆինանսավորում չի նախատեսվում. ներդրումների այլընտրանքային արժեքը՝ 11%.

Իրականացված հարցումների. ինչպես նաև ավտոմեքենաների սեփականատերերի կողմից վճարելու պատրաստակամության համաձայն՝ ընդհանուր համապատասխանությունը կազմել է 54.4%:

Տարեկան վճարումներից ստացվելիք հասույթը կանխատեսվում է որպես ամենաբարձրը և ավելի բարձր է. քան մյուս թուր 5 աղբյուրներից միասին վերցված երկու սցենարների համար էլ

«Սովորական» սցենարի համար գործառնական ծախսերը հաշվարկում են 82,595 ԱՄՆ դոլար, իսկ «լավատեսական» սցենարի համար՝ 86,536 ԱՄՆ դոլար բազային տարվա համար (Տարի 0) «Սովորական» սցենարի դեպքում նախատեսվում է ծախսերի աճ՝ կազմելով 111,649 ԱՄՆ դոլար, իսկ «լավատեսական» սցենարի դեպքում՝ 145,136 ԱՄՆ դոլար:

Զուտ եկամտի մարժան տատանվում է 30 1%-37 1%-ի միջև «սովորական» սցենարի համար և 25.2%-41.2%-ի միջև «լավատեսական» սցենարի համար կանխատեսվող 10 տարվա ընթացքում. Ծրագրի զուտ ներկա արժեքը երկու սցենարների համար համապատասխանաբար կազմում է 58,514 ԱՄՆ դոլար և 91,821 ԱՄՆ դոլար Բացի այդ, Ծրագրի շահութաբերության ներքին գործակիցը հաշվարկվում է 21 52% և 27 96% երկու սցենարների համար

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ ֆինանսական ազդեցությունը դրական է՝ հաշվի առնելով վերը նշված հիմնական ցուցանիշները

Առաջարկվող ռազմավարության մանրամասն վերլուծությունը ներկայացված է հաշվետվության վերջին բաժնում

1 Ներածություն

1.1 Նախաբան

Գյումրի համայնքը («Գյումրին» կամ «Համայնքը») Շիրակի մարզի կենտրոնն է և Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքը մոտավորապես 146.000 գրանցված բնակչությամբ Քաղաքի տնտեսական գործունեությունը հիմնականում ներառում է՝ զբոսաշրջություն, շինանյութերի արտադրություն, տեքստիլ արդյունաբերություն և սննդամթերքի վերամշակում Հիմնական ճանապարհները բոլոր ուղղություններով հատվում են Գյումրիում, և չկա որևիցե շրջանցում, որով հնարավոր կլիներ քաղաքի կենտրոնից հեռացնել երթևեկությունը Վերջին երկու տասնամյակների ընթացքում քիչ ներդրումների կամ անարդյունավետ պահպանման հետևանքով փողոցային ենթակառուցվածքները և փողոցների լուսավորությունը գտնվում են շատ վատ վիճակում

Ասիական Զարգացման Բանկի («ԱԶԲ») կողմից ֆինանսավորված ուսումնասիրության արդյունքում 2014 թ ի հուլիսին պատրաստվել է Գյումրու քաղաքային զարգացման տասնամյա ծրագիրը Այս ուսումնասիրությունը կենտրոնացված է քաղաքաշինության զարգացման տարատեսակ խնդիրների շուրջ ներառյալ փողոցային ցանցի ենթակառուցվածքի և փողոցների լուսավորության բարեկարգման հարցերը, որոնք Քաղաքի համար առաջնահերթ ծրագրեր են

Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկը («ՎԵԲ») կամ «Բանկը») աջակցություն է ցուցաբերել Քաղաքին Իրագործելիության ուսումնասիրության պատրաստման հարցում, որն ավարտվել է 2015 թ ին Այն ուղղված էր փողոցային ենթակառուցվածքների և փողոցների լուսավորության բարելավման աշխատանքներին Համաձայնեցված Գյումրու համայնքապետարանի հետ՝ այս Իրագործելիության ուսումնասիրությունն ընդգրկել է մայրաքաղաքի՝ 15-20 կմ ընդհանուր երկարությամբ առաջնային և երկրորդային ճանապարհների մայրերի և լուսավորության բարելավման հարցերը ՎԵԲ-ի վարկային/դրամաշնորհային ծրագրերի իրականացումը համակարգելու, ինչպես նաև Ծրագրերի համար ընտրված խորհրդատուներին և կապալառուներին ղեկավարելու նպատակով Գյումրու քաղաքապետը ձևավորել է Նախագծի իրականացման թիմ («ՆԻԹ»), որը պատասխանատու կլինի այս Նախագծի հետ կապված ամենօրյա գործողությունների համար

Համայնքը պատասխանատու է ընդհանուր ավտոկայանման քաղաքականության, ավտոկայանատեղերի կարգավորման, փողոցային ավտոկայանման սակագների, փողոցային ավտոկայանման և քաղաքային ավտոկայանների կառավարման, եկամուտների հավաքագրման և հարկադիր կիրառման համար, քանի որ Գյումրու «Տրանսպորտի» և «Բնակավայրերի և շրջակա միջավայրի պահպանության», «Առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման» բաժինները պատասխանատու են երթևեկության մասին ակտերի կիրարկման համար

Ավտոմեքենաների քանակի աճի արդյունքում քաղաքի կենտրոնում կայանման պահանջարկն արագորեն աճում է, և պահանջարկը զգալիորեն գերազանցում է առկա ավտոկայանատեղերի քանակը Սա մեծամասամբ հանգեցնում է մայրերի վրա ավտոկայանմանը, ինչը բացասաբար է անդրադառնում անվտանգության և քաղաքի ներքին միջավայրի վրա Բացի այդ, երկարաժամկետ

հեռանկարում ավտոկայանատեղերի պակասը կարող է խոչընդոտել քաղաքի կենտրոնի տնտեսական զարգացմանը

Այս մարտահրավերներին դիմակայելու համար Համայնքը որոշեց ուսումնասիրել քաղաքի ներսում ավտոկայանման բարելավված կառավարման տարբերակներ քաղաքային ճանապարհների արդյունավետ օգտագործման ապահովելու համար՝ կիրառելով ավտոկայանատեղերի սակագներ որպես օգտագործողի կողմից ճանապարհի օգտագործման վճար Բացի այդ, Համայնքը ցանկանում է ուսումնասիրել մասնավոր հատվածի մասնակցության հնարավորությունները քաղաքի կենտրոնում փողոցային ավտոկայանման կառավարման հարցում՝ ներառյալ գործող պայմանագրերը և կոնցեսիաները

1.2 Ծրագրի նպատակ

Գյումրի համայնքը նշանակեց «ՌՕՄ Թրանսփորթեյշն Էնջինիրինգ» ընկերությանը՝ «Գրանթ Թորնթոն Քնսայթինգ» ՓԲԸ-ի հետ համատեղ իրականացնելու հետևյալ քայլերը

- Վերլուծել ներկայիս իրավիճակը, Քաղաքի կենտրոնում ավտոկայանման ընթացիկ պահանջարկը և առաջարկը, ավտոկայանման կառավարման և իրականացման առկա կազմակերպումն ու արդյունավետությունը
- Մշակել ավտոկայանման երկարաժամկետ և հստակ ռազմավարություն (փողոցային և արտափողոցային ավտոկայանման առաջարկ և համապատասխան սակագներ)
- Մշակել Գործողությունների պլան՝ սահմանելով կարճաժամկետ և երկարաժամկետ քայլեր ավտոկայանատեղերի ապահովման բարելավման համար՝ կայուն տրանսպորտային նպատակներին համապատասխան ներառյալ առաջարկություններ բարելավելու առկա տարածքների օգտագործումը, ինչպես նաև կազմակերպական և ֆինանսավորման կառուցվածքի վերաբերյալ առաջարկություններ Ռազմավարությանն աջակցելու համար

Վերջնական Գործողությունների պլանը կներառի Ավտոկայանման Փորձնական Սխեմա՝ որպես առաջարկվող Ռազմավարության նախնական փուլ Ավտոկայանատեղերի համալիր կառավարման պլանի իրականացումը կհանգեցնի դրական աճի և կխնայի տարածք քաղաքի առավել ծանրաբեռնված հատվածներում

1.3 Հաշվետվության կառուցվածքը

Ավտոկայանատեղերի ռազմավարության հաշվետվության նախագիծային տարբերակն ունի հետևյալ կառուցվածքը՝

- **Բաժին 1** - այս բաժինն ուղղված է սույն նախագծին և հաշվետվությանը բովանդակություն հաղորդելուն
- **Բաժիններ 2 և 3** - այս բաժիններում խորհրդատուն ներկայացնում է ավտոկայանատեղերի ռազմավարության տարբեր տարրեր և ներկայացնում միջազգային հինգ քաղաքների

տիպային ռաումնասիրություն ցույց տալու համար. թե ինչպես են այդ տարրերն օգտագործվում
ավտոկայանատեղերի տարբեր ռազմավարությունների սյուրագայում

- **Քաժին 4** - այս բաժինն ուղղված է Գյումրու ապագային՝ այն իր մեջ ներառում է Գյումրու համար
մինչև 2028 թ -ը էվոլյուցիայի 2 սցենարների զարգացումը և նկարագրում, թե ինչպիսին կլինի
տրանսպորտի իրավիճակը առանց ավտոկայանատեղերի ռազմավարության:
- **Քաժիններ 5 և 6** - այս բաժինները նվիրված են Գյումրի համայնքի համար առավել հարմար
ավտոկայանատեղերի ռազմավարության առաջարկին և գնահատված ազդեցությանը
- **Հավելված 7**-ում ներկայացված են Կիրարկման տեխնոլոգիական մակարդակի 3
տարբերակների վերլուծականներ


2 Ինչպես կառուցել ճիշտ ավտոկայանատեղերի ռազմավարություն

2.1 Ներածություն

Ավտոկայանատեղերի ռազմավարություն կառուցելը քաղաքի համար կայանման քաղաքականության որոշման հիմնական բաղադրիչն է Ընդհանուր առմամբ, ռազմավարությունը հաջորդում է խորհրդատուի կողմից նախկինում որոշված քայլերին, որը ներառում է քաղաքի ներկայիս իրավիճակի դիագնոստիկան, ինչպես նաև ապագա տարիների համար սահմանված տեսլականը՝ նպատակաուղղված քաղաքականության ներքո ինչպես նկարագրված է ստորև բերված ինֆոգրաֆիկ պատկերում Կայանման ռազմավարության ստեղծումից հետո քաղաքականությունը վերածվում է իրականացման ասպեկտների՝ ներառյալ հետևանքները և գործողությունների պլանը.

Ավտոկայանատեղերի ռազմավարությունը բաղկացած է երեք քայլերից, որոնցից յուրաքանչյուրն իր մեջ ներառում է մի քանի բաղադրիչներ Առաջինը դա քաղաքականության ռազմավարական նպատակների սահմանումն է, որը նախատեսված է հաջորդող երկու քայլերի բաղադրիչներն ուղղորդելու և առաջնորդելու համար Նպատակները սահմանվում են տրանսպորտի պահանջարկի, երթևեկության և հասանելիության, ինչպես նաև ֆինանսական ասպեկտների տեսանկյունից, Հաշվի առնելով վերոնշյալ սահմանումները՝ ռազմավարության մարտավարական քայլը մանրամասնում է հետևյալ չորս բաղադրիչները՝ աշխարհագրական ծածկույթ, գոտևորման համակարգ, ժամանակային նկատառումներ և սակագնի կառուցվածք, Վերջում, բխելով ռազմավարական և մարտավարական մակարդակից՝ սահմանվել են տեխնոլոգիաների, կիրարկման, բացառությունների, կանոնակարգերի, կառավարման և հանրային իրազեկման գործառնական ասպեկտները

Պատկեր 2.1 Ավտոկլավատեղերի ռազմավարության քայլերը



Այս բաժինը բացատրում է ավտոկլավատեղերի ռազմավարության յուրաքանչյուր բաղադրիչը, ինչպես նաև առաջարկում է յուրաքանչյուրի համար ընտրության հնարավոր տարբերակներ։ Այս ամենը համառոտ ամփոփված է հաջորդ աղյուսակում։

Աղյուսակ 2.1 Ավտոկայանատեղերի ռազմավարության բաղադրիչներ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ						
Տրանսպորտ		Երթևեկություն և հասանելիություն		Հատույթի գոյացում		
B	Խրախոսել ինտեգրացիայի տրանսպորտի մոդալ անցումը (նվազեցնել ավտոմեքենաների օգտագործումը)	Զինվորական և քաղաքացիական անվտանգություն		Հատույթի ինտեգրացիա		
	Անընդունառնել հասարակական տրանսպորտային միջոցների	Ավտոկայանատեղերի առաջնահերթություն երթևեկության իրադրության նվազագույն ազդեցությամբ		Ծախսածաճիկում/կայուն		
	Ոչ մի ազդեցություն մոդալ անցման վրա (Ավտոմեքենաների օգտագործման ոչ մի նվազում)	Ավտոկայանատեղերի առաջնահերթություն		Ծախսության մատուցման վրա իմնական		
ՄԱՐՇՈՒՄԱՐԱԿԱՆ						
	Աշխարհագրական ծախսեր	Գործարարական համակարգ	Ժամանակացույցի նվազագույն		Սահմանափակումներ	
	Ամբողջ ծախսեր + ծախսեր	Ծախսեր	Ժամանակացույցի առաջնահերթություններ օրական, ամենամյակ, օրական		Միջանկյալ, Հատույթի ցանկ	
B	Հատույթի առաջնություն + լրացուցիչ պահանջներ	Զինվորական և քաղաքացիական	Ժամանակացույցի առաջնահերթություններ		Սահմանափակումներ	
	Հատույթի առաջնություն/հիմնական տարածք	Միջանկյալ	Ոչ մի ժամանակացույցի նվազագույն		Սահմանափակումներ	
ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ						
	Տեխնոլոգիա	Կիրառվում	Բացառություններ	Կազմակերպում և լիարժեքություն	Կատարվող	Հանդիման արձեղանագրություն
A	Մեծածախ ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ
B	Մեծածախ ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ
C	Տեխնոլոգիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ	Հանգստի ինտեգրացիայի տրանսպորտի ինտեգրացիայի տրանսպորտ

2.2 Ռազմավարություն և նպատակներ


2.2.1 Տրանսպորտ

Պատշաճ ավտոկայանատեղերի ռազմավարության առաջին տարրը սահմանում է պլանավորողի կամ համայնքապետարանի կողմից որոշված տրանսպորտային նպատակները՝ նախատեսված ռազմավարությունն իրականացնելու համար Ավտոկայանատեղերի քաղաքականությունը քաղաքի տրանսպորտային համակարգի միայն մի ասպեկտն է և ունի մեծ ազդեցություն մասնավոր տրանսպորտի՝ ընդդեմ հասարակական տրանսպորտի պահանջարկի վրա Ավտոկայանատեղերի քաղաքականությունը նպատակ ունի կամ խրախուսել մոդալ անցումը հասարակական տրանսպորտի, և այդպիսով նվազեցնել մեքենայի օգտագործումը, կամ ազդեցություն չունենալ մեքենայի օգտագործման վրա և խթանել մեքենայի բարենպաստ տրանսպորտային սխեմայի ստեղծումը

Տրանսպորտային նկատառումներն առկա են թե՛ մարտավարական թեմաներում, ինչպիսիք են գոտևորման համակարգը, սակագնի կառուցվածքը և ավտոկայանման ժամանակային սահմանափակումները, թե՛ գործառնական թեմաներում, ինչպիսիք են ավտոկայանատեղերի ծրագրերի նկատմամբ կիրարկման և բացառությունների համայնքային մոտեցումը՝

Եվրոպական Միության՝ Եվրոպայում քաղաքային շարժունակության վերաբերյալ քաղաքականության փաստաթղթում ասվում է, որ «...ցանկալի չէ, ոչ էլ արդյունավետ՝ ունենալ մեքենա, որպես տրանսպորտի գերիշխող միջոց...» Թեպետ սա նպատակաուղղված է հիմնականում խիտ բնակեցված տարածքներին, որոնք ունեն ծանր գերբնակեցվածություն և բարձր բնակչության խտություն, պետք է հաշվի առնել առաջիկա բնակչության խտությունը քիչ մարդաշատ վայրերում ևս

Ուստի կարևոր է առաջին հերթին որոշել՝ արդյոք ավտոկայանատեղերի ռազմավարությունը նպատակ ունի մոդալ անցում կատարել հասարակական տրանսպորտային միջոցների օգտագործմանը, մասնավոր տրանսպորտային ուղղվածություն ունեցող քաղաքականությանը, թե երկուսի համատեղ խառնուրդին, որը սահմանում է քաղաքականությունը որպես միջին գոտի երկուսն էլ խթանելու համար



2.2.2 Երթևեկություն և հասանելիություն

Ավտոկայանատեղերի ռազմավարության սահմանման երկրորդ բաղադրիչը որոշում է մի կողմից մասնավոր տրանսպորտային միջոցների հասանելիությունը և, մյուս կողմից, երթևեկության խափանումները: Տրանսպորտային պլանավորումն ընկած է այն հիմնական ենթադրությունների վրա, որ ավտոկայանումը բնականաբար կհանդիսանա որպես գերբեռնվածության պատճառ, քանի որ


գրադեցվելու են տարածքներ տրանսպորտային միջոցների գծերի հաշվին. Հետևաբար, ավտոկայանատեղերի առաջարկը բարելավում է հասանելիությունը՝ հնարավորություն տալով լինել մոտիկ ուղղություններին, սակայն նվազեցնում է տրանսպորտային միջոցների հզորությունը և դանդաղեցնում՝ երթևեկությունը

Այս թեմայի շուրջ քննարկումները ներառում են կրկնակի ավտոկայանատեղերը, որը հաջորդում է նվազեցված առաջարկին. խաչմերուկների մոտ ավտոկայանատեղերը, ավտոկայանատեղերի տեսակը, ապրանքների բեռնումը և բեռնաթափումը Օրինակ, մեքենա վարելու արագության իջեցումը, որն առաջանում է ավտոկայանատեղ փնտրելու պատճառով, և ավտոկայանատեղ մտնել և դուրս գալու ընթացքում ժամանակի կորուստը ստեղծում են տրանսպորտային միջոցների հոսքի ընդհատում:

Ինչպես բացատրվում է տրանսպորտային տեսանկյունից, ռազմավարության սահմանումներն ընթանում են մարտավարական և գործառնական սխեմաների հետ զուգահեռ Այսպիսով, խաչմերուկների մոտ ավտոկայանումը կարող է մեծացնել ավտոկայանման առաջարկը, սակայն նվազեցնում է երթևեկության հոսքը Ռազմավարությամբ որոշված ավտոկայանատեղերի տեսակը սահմանում է նաև հավասարակշռություն հասանելիության և կայանման միջև Չնայած այն հանգամանքին, որ անկյունային ավտոկանգառն ապահովում է ավելի շատ կայանատեղեր, այն նպաստում է ավտոմեքենայի հոսքի հետագա նվազմանը

Մեկ ուրիշ նկատառում պետք է հաշվի առնել այն կոմերցիոն հոդերի գոտիներում, որտեղ իրականացնում են ապրանքների բեռնում և բեռնաթափում Քանի որ բեռնման գոտիները նվազեցնում են ավտոկայանատեղերի առաջարկը, նրանք կանխում են տրանսպորտային միջոցների հոսքի կրճատումը՝ նշելով տարածքներ երթևեկության խափանումներից խուսափելու համար, ինչպիսիք են օրինակ Կենտրոնական քիզնես հատվածները

Սահմանափակ գոտիներում կրկնակի կամ շրջակա խաչմերուկներում ավտոկանգառների կիրառմանը առնչվող հարցերը նույնպես հաշվի են առնվել ռազմավարական նպատակներում Չնայած այդ խնդիրները չեն կարգավորվում ավտոկայանման իրականացման միջոցով, քանի որ կրկնակի ավտոկանգառներն անօրինական են, լինեն դրանք թե՛ կարգավորվող ավտոկանգառներ, թե՛ ոչ, պետք է հաշվի առնել նաև հարակից ասպեկտների կիրառման մակարդակը



2.2.3 Հասույթի գոյացում

Ավտոկայանատեղերի քաղաքականության շրջանակներում ռազմավարական վերջին տեսակետը սահմանում է պլանավորողի և համայնքի կողմից օգտագործվող ֆինանսական մոդելը՝ Այս տեսակետը


սահմանում է. թե արդյոք ավտոկայանատեղերի քաղաքականությունը հետապնդում է շահույթ կամ ծառայություն, և, համապատասխանաբար, դրանց հարկադիր կիրառումը, ժամանակային նկատառումները և հասարակության իրազեկվածության մակարդակը

Շահույթ հետապնդող քաղաքականությունը բարենպաստ է, քանի որ ստեղծվում է եկամտի աղբյուր համայնքապետարանի համար, և հաճախ սա է ընտրվում որպես քաղաքականություն այն քաղաքների համար, որոնք ցանկանում են սահմանափակել մասնավոր տրանսպորտային միջոցների պահանջարկը և միաժամանակ ստանալ ֆինանսավորում ծրագրերի զարգացման համար. Այնուամենայնիվ, այս քաղաքականությունը սոցիալապես ազդում է ցածր եկամուտ ունեցող բնակչության վրա կայանման բարձր տեմպերի և ճկունության բացակայության պատճառով Սա էլ իր հերթին առաջացնում է դժգոհություն բնակիչների շրջանում՝ ուղղված համայնքապետարանին և կիրառվող ջանքերին ու հաստատված ցածր դրույքաչափերին:

Մյուս կողմից, ծառայություն մատուցելուն միտված քաղաքականությունը հաճախ թելադրում է ֆինանսական աջակցություն համայնքապետարանի կողմից քաղաքային նախագծերի ֆինանսավորման համար՝ ներառյալ ավտոկայանատեղերի քաղաքականությունը և կիրարկումը Որպես քաղաքականություն, ծառայության մատուցմանը նախապատվություն տալը հնարավորություն է ընձեռում հանրային աջակցություն ստանալու համար, սակայն պահանջում է ռեսուրսների տեղաբաշխում քաղաքականության իրականացման, գովազդելու և կիրարկման համար

Սովորաբար կիրառվում է միջին մի քաղաքականություն, որը նպատակ ունի հավասարակշռություն ստեղծել շահույթ հետապնդող և ծառայության մատուցմանը միտված քաղաքականությունների միջև և որն առաջացնում է ծախսածածկում և կայուն կարգավիճակ Սա հնարավորություն է տալիս իրականացնել ավտոկայանատեղերի քաղաքականություն՝ առանց համայնքային միջոցների հատկացման, սակայն առանց շահույթի

Թյուր պատկերացում է, թե ավտոկայանատեղերի համար վճարելն ընկալվում է հաճախ ոչ արդարացի մեքենատերերի և մեքենա վարողների համար Նույնիսկ եթե որևէ քաղաքականություն կամ կարգավորում չկա, գերբեռնվածության, երթևեկության հոսքի և նույնիսկ տարածքների զբաղվածության նկատառումների համար վճարները վճարվում են մեքենա չվարողների կամ համայնքապետարանի հարկ վճարողների կողմից անտղղակիորեն Ավտոկայանատեղերի համար վճար գանձելը պատասխանատվության է ենթարկում այն մարդկանց, ովքեր օգտվում են համայնքային հնարավորություններից, և այդպիսով ստեղծում անաչառ լուծում



2.3 Մարտավարական ասպեկտներ

Սահմանելով ավտոկայանատեղերի քաղաքականության ռազմավարական նպատակները՝ մարտավարական ասպեկտները հասցեագրված են ազդեցության մակարդակը և գործունեությունը


որոշելու համար, որը քաղաքականությամբ ուղղված է ինչպես աշխարհագրական ընդգրկման, այնպես էլ ժամանակային առումներով Մարտավարական պլանը բաղկացած է ստորև նշված չորս հիմնական սահմանումներից՝ ազդեցության գոտի, ավտոկայանման տարածք, ժամանակային նկատառումներ և սակագնի կառուցվածք.

2.3.1 Ազդեցության գոտի

Ավտոկայանման քաղաքականության համար ազդեցության գոտի սահմանելը կրիտիկական է որոշում կայացնողների և համայնքային պլանավորողների համար Ավտոկայանատեղերի քաղաքականությունը կարող է կամ կենտրոնանալ որոշակի տարածքների վրա, որը սահմանվել է որպես թիրախային տարածք կամ վերաբերել ամբողջ քաղաքին՝ ներառյալ ծայրամասերը և շրջակա տարածքները.

Ազդեցության գոտիները սահմանվել են ռազմավարության իրականացման աշխարհագրական շրջանակներով, ինչպես նաև հարևանությամբ գտնվող գոտիներով, որոնք ենթարկվել են փոփոխված ճամփորդական սովորությունների ազդեցությանը. Մինչդեռ ազդեցության գոտին ներառում է իրականացման տարածքներ, որոնք բաղկացած են տարբեր ավտոկայանման և այլ հարակից տարածքներից, մնացած տարածքները կարող են ենթարկվել փոփոխության ռազմավարության իրականացման ժամանակ. Օրինակ, կենտրոնական բիզնես հատվածներում ավտոկայանման քաղաքականություն իրականացնելը կարող է ազդել շրջակա միջավայրի վրա՝ առաջացնելով մեծ պահանջարկ այդ վայրերում կայանելու համար: Ավտոկայանման քաղաքականության կենտրոնացումը պահանջում է ամբողջական մոտեցում, որը հաշվի է առնում այն ազդեցությունը, որն ունի համայնքի վրա որպես պատասխանատու մարմին:

Հետևաբար, շատ կարևոր է սահմանել ավտոկայանման քաղաքականության աշխարհագրական շրջանակները, ինչպես սահմանների իրականացման, այնպես էլ հարևան գոտիների վրա ունեցած ազդեցության առումներով: Ընտրությունը կայանում է հատուկ տարածքների կոնսերվատիվ տարբերակի՝ ինչպիսիք են կենտրոնական բիզնես հատվածները (ԿԲՏ) կամ թիրախային տարածքները, և ողջ քաղաքի մասշտաբով սահմանումների միջև, որոնք կարող են ներառել կամ ազդեցություն ունենալ շրջակա ծայրամասային գոտիներ վրա Աշխարհագրական ոլորտի մանրամասն վերլուծությունը ներկայացված է հաջորդ բաժիններում:




2.3.2 Ավտոկայանման գոտի


Ռազմավարական նպատակների իրագործման համար կարևոր մարտավարական գործիք է կայանատեղերի սահմանումը Այստեղ առաջնային քաղաքականության տարբերակ է սահմանել մեկ գոտի, որտեղ նույն քաղաքականությունը իրականացվում է ժամանակի սահմանափակումների

միասնական ձևաչափով և վճարների և փոխարժեքի սահմանումով Այս տարբերակն ապահովում է ավելի հեշտ գործառնական սահմանում, կիրարկում և կարգավորում, ինչպես նաև հանրության համար ավելի հստակ շահագործում, Մեկ գոտի, որտեղ բոլոր ավտոկայանատեղերը նույնն են ավելի հեշտ է այն հասկանալ և ընդունել:

Քարտեզ 2.1 Ավտոկայանման գոտիներ Փարիզում



Հակառակ դեպքում մի քանի գոտիների սահմանում է իրականացվում, որոնք տարբերվում են ժամային վճարներով, բացառություններով և ժամանակային սահմանափակումներով, ինչն ունի տարբեր նպատակների համար տարբեր գոտիների թիրախավորման առավելություն: Համաձայն



մարտավարական մոտեցման՝ կարելի է սահմանել գոտի, որպեսզի բարձրացնել հասանելիությունը՝ ստեղծելով ավտոկայանման մեծ առաջարկ մասնավոր մեքենաների համար և մյուս կողմից էլ գոյացնել եկամուտ՝ սահմանելով բարձր սակագներ մեկ ժամվա համար Գոտնորման վրա հիմնված քաղաքականությունն ապահովում է կարգավորող ճկունություն և, ընդհանուր առմամբ, նպաստում ժամանակակից տեխնոլոգիական կիրարկման քաղաքականությանը

2.3.3 Ժամանակային նկատառումներ

Ժամանակային արժեքի նկատառումները մեծ ազդեցություն ունեն մարդկանց ճանապարհորդության սովորույթների և ուղղությունների վերաբերյալ ընդունած որոշումների վրա Որպես այդպիսին, ավտոկայանատեղի քաղաքականության ժամանակահատվածի վերաբերյալ մարտավարական տարբեր մոտեցումներ կարող են ազդել քաղաքի բնակիչների վրա տարբեր ձևերով, Ավտոկայանատեղերի կարգավորման համար կիրառվում են տարբեր ժամանակային սահմանափակումներ և ընդհանուր առմամբ դասակարգվում են երեք տեսակի՝ ժամային սահմանափակում, օրվա ընթացքում որոշակի ժամերի սահմանափակում և օրական


սահմանափակում Այս երեքի միավորումը նույնպես հնարավոր է և հաճախ գործածելի տարբեր քաղաքներում

Ժամանակային սահմանափակում չունեցող կանոնակարգված ավտոկայանումը մեքենատերերին ապահովում է կարգավորված և կազմակերպված ավտոկայանատեղերով առանց անհանգստանալու ցանկացած տեսակի ժամանակային նկատառումների մասին


Ժամանակի վրա հիմնված սահմանափակումն օգտագործվում է տարածված վայրերում կայանման պահանջարկը նվազեցնելու համար Իրատեսություն, երբ ավտոկայանատեղի թույլատրված ժամանակը սահմանափակ է. մարդիկ ստիպված են մի քանի ժամ անց տեղաշարժել իրենց մեքենան, որպեսզի թույլ տան դինամիկ հասանելիություն տարբեր առևտրային կենտրոններին և հետաքրքրության վայրերին. Կիրառման տեսանկյունից, այն ավելի է բարդացնում իրավիճակը վերահսկելու գործընթացը և պահանջում է ծառայողների անընդմեջ հսկողությունը կամ ժամանակակից տեխնոլոգիական գործիքների առկայությունը

Օրվա ընթացքում որոշակի ժամերի սահմանափակումը իրականացվում է, երբ օրվա որոշ ժամերին ավտոկայանման պահանջարկն ավելի մեծ է, քան մյուս ժամերին Օրինակ, աշխատանքային ժամերին, կենտրոնական բիզնես հատվածներում ավտոկայանատեղերի պահանջարկը շատ մեծ է, և այսպիսով, պահանջում է պահանջարկի կառավարման քաղաքականություն, որը, հավանաբար, չի պահանջվի և կիրառվի օրվա մնացած ժամերի համար. Մյուս կողմից, քնակելի տարածքներում, որտեղ բացակայում է ավտոկայանատեղերի առաջարկը, կարելի է ներկայացնել ճիշտ հակառակ քաղաքականությունը, քանի որ այնտեղ երեկոյան ժամերին է պահանջարկը մեծանում, երբ քոլորը վերադառնում են տուն.

Պատկեր 2.2 Ժամանակային սահմանափակումով կայանման օրինակ (Աղբյուր՝ Նոր Հարավային Ուելսի կառավարություն)



Այսպիսով, օրվա վրա հիմնված սահմանափակումներ կարելի է կիրառել այն տարածքներում, որտեղ որոշակի օրեր ավելի մեծ պահանջարկ ունեն, քան մյուսները. Դա հաճախ կիրառելի է բիզնես տարածքների համար, որտեղ պահանջարկն օրվա ընթացքում բարձր է, կամ առևտրային տարածքների համար, որտեղ պահանջարկը բարձր է հատկապես հանգստյան օրերին




2 3 4 Սակագնի կառուցվածք և վճարներ

Ավտոկայանատեղերի քաղաքականության իրականացման առավել զգայուն և հակասական կողմերն են հաճախ հանդիսանում համայնքապետարանի կողմից կիրառվող սակագնի կառուցվածքը և վճարները՝ Տակիտիկական ռազմավարության շրջանակներում մի շարք տարբերակներ մի կողմից համապատասխանում են ուղղակիորեն ռազմավարական մի քանի նպատակներին, իսկ մյուս կողմից, պահանջում են գործառնական սխեմաների օգտագործում Այս թեմաների շուրջ սովորաբար կիրառվում է երկու տարբեր մարտավարություն, մինչդեռ փոխզիջումային տատանումները սովորաբար իրականացվում են ամբողջ աշխարհում Դինամիկ մոտեցումը, որը ներառում է բարդ և թանկ ավտոկայանատեղերի սխեմա, հաճախ կիրառվում է շահույթ հետապնդող ֆինանսական մոդելի համար, մինչդեռ ստատիկ մոտեցումը, որը ներառում է ավելի պարզ և համեմատաբար մատչելի սխեմա, կիրառվում է ծառայության մատուցմանը միտված ռազմավարության համար

Դինամիկ մոտեցումը կիրառվում է բարձր շահույթ հետապնդող տրանսպորտային քաղաքականություն իրականացնելու դեպքում Այն ներառում է չտրափոխվող ամենժամյա սակագներ, նվազագույն բացառություններ և ինտենսիվ կիրառվում Այն օգտագործվում է ավտոկայանատեղերը սահմանափակելու և մեքենա վարողներին կենտրոնական մեծ պահանջարկ ունեցող վայրերում սեփական մեքենաներով կայանելուն խոչընդոտելու համար, ինչպես նաև երկարաժամկետ կայանումից խուսափելու համար: Սակագնի կառուցվածքը, որը հնարավոր է կիրառել մարտավարական ռազմավարության շրջանակներում, կարող է ներառել գնի բարձրացում երկարաժամկետ կայանման դեպքում կամ առաջացնել բարձր սակագներ առաջին ժամերի համար որպես ընդհանուր կանխարգելիչ

Այս մեթոդը հաճախ ստեղծում է սոցիալական անհավասարություն, քանի որ այն հնարավորություն է տալիս բարձր սոցիալ-տնտեսական խավի բնակիչներին օգտվել ավտոկայանատեղերից, մինչդեռ հուսահատեցնելով ցածր խավին, որը չի կարող իրեն թույլ տալ օգտվել այդ ավտոկայանատեղերից Այնուամենայնիվ, այն առաջացնում է ավելի բարձր շահույթ համայնքի իշխանությունների համար և հնարավորություն է տալիս ստեղծել ավելի ուժեղ կարգավորող համակարգ

Ստատիկ մոտեցումը կիրառվում է որպես քաղաքականության իրականացման պարզ մեթոդ և թելադրում է միասնական դրույթ, որը հաճախ հնարավորություն է տալիս համայնքապետարանին ստեղծել կայուն ավտոկայանման սխեմա Այստեղ ավտոկայանատեղի գինը որոշվում է ըստ հարկադիր ծախսերի, որոնք պետք է ծածկվեն և հնարավորության դեպքում նվազեցվեն.



2.4 Գործառնական ասպեկտներ

Չնայած ավտոկայանատեղերի քաղաքականության ուղղմավարական և մարտավարական ասպեկտները սահմանում են բարձր մակարդակի պլանավորում, գործառնական ասպեկտները կիրառման ձևերն են, որոնք համապատասխանում են սահմանված նպատակներին Այս բաժնում կներկայացվեն տեխնոլոգիայի, կիրարկման, իրավական ասպեկտների, բացառությունների, կառավարման և հանրային իրազեկման գործառնական խնդիրները և կցուցադրվեն տիպային ընտրված քաղաքների ուսումնասիրություններով

2.4.1 Տեխնոլոգիա

Տրանսպորտը մշտապես ենթարկվում է փոփոխությունների և աշխարհում այն զարգանում է տեխնոլոգիական բարելավումներով Սա ազդեցություն է ունենում ավտոկայանատեղերի ոլորտի վրա նույնպես և իր հերթին պահանջում է հարմարվել այդ փոփոխություններին, որոնք տեղի են ունենում տարբեր միջոցառումների իրականացման միջոցով, որոնք նախկինում չեն եղել: Գործնականում, ավտոկայանատեղերի քաղաքականությունը որոշվում է կամ բարձր տեխնոլոգիաների կամ տեխնոլոգիաների սահմանափակ օգտագործմամբ կախված քաղաքի ֆինանսական հնարավորություններից և գործառնական պահանջներից

Տեխնոլոգիաների բարձր կիրառումն իրականացվում է մի քանի պատճառներով առաջին հերթին զլորալ քաղաքներում, որոնք ցանկանում են ներկայացնել իրենց որպես ժամանակակից բնակչության կենտրոն, որտեղ տեխնոլոգիաների կիրառումը բոլոր առումներով պարտադրի է, այդ թվում և ավտոկայանատեղերում երկրորդ հերթին, այն վայրերում, որտեղ զբոսաշրջության, բիզնեսի կամ որևէ այլ գործոնի պատճառով առաջանում է ավտոկայանատեղերի մեծ պահանջարկ, տեխնոլոգիաների կիրառումը հեշտացնում է կայանման գործընթացը ինչպես բնակիչների, այնպես էլ համայնքապետարանի համար: Ավտոկայանատեղերի համար մշակված հեռախոսային հավելվածները հնարավորություն են տալիս մեքենա կայանողին հեշտությամբ վճարել ավտոկայանատեղի համար առանց կանխիկ գումարի, իսկ ավտոկայանատեղերի վերահսկիչները իրենց հերթին հեշտությամբ կարողանում են ստուգել արդյոք գումարը վճարված է, թե՛ ոչ:

Գյումրու ներկայիս ավտոկայանման վիճակը, ինչպես մանրամասն նկարագրված է Դիագնոստիկ հաշվետվության մեջ, արդեն այսօր ի հայտ է բերում հաճախակի գերբեռնվածության, երթևեկության խոչընդոտման և անվտանգության խնդրահարույց հարցեր: Այս խնդիրները միայն կխորանան նախկինում ներկայացված սցենարների դեպքում էլ: Որքան մեծ է աճը, այնքան մեծ է բացասական երևույթների խորացումը, ինչը հնարավոր է դանդաղեցնի այդ աճը բացասական ազդեցություններով:

Ներկայիս «Անվճար» ավտոկայանատեղերից քիչ ծախսը իշխանությունների համար համանման ձևով կբարձրանա այնքան ժամանակ, քանի դեռ ռազմավարության ֆինանսավորման համար ֆինանսական ծրագիր չկա:

Արդեն այսօր խնդիրը բավականին մեծ է, որ չնայած ավտոկայանատեղերից օգտվողների մեծ մասի ընդհանուր գոհունակությանը անվճար ավտոկայանատեղերը, նրանք նաև մեծամասնություն են կազմում՝ կողմ հանդես գալով իրավիճակի բարելավման համար, նույնիսկ եթե դա ենթադրում է վճարում:

Գյումրու զարգացման տեսլականում էական է, որ համայնքապետարանն իրականացնում է Կայուն ավտոկայանման ռազմավարություն ավտոմեքենաների երթևեկությունը, ինչպես նաև հետիոտների հոսքը նոսրացնելու, Գյումրու քաղաքացու համար անվտանգության և ապահովության բարձրացման, ինչպես նաև ընդհանուր առմամբ, բոլոր ճանապարհներից օգտվողների պայմանները բարելավելու համար՝ միաժամանակ ապահովելով ֆինանսական կենսունակություն և հասարակական ընդունում:

5 Գյումրիում ավտոկայանման առաջարկվող ռազմավարություն

5.1 Ռազմավարական որոշումներ


5.1.1 Տրանսպորտի հետ կապված նպատակների սահմանում

Հաշվի առնելով համայնքում տրանսպորտի ռեժիմի ներկայիս հավասարակշռությունը, հանրային տրանսպորտի անբավարար հագեցվածությունը և այլընտրանքային տրանսպորտային միջոցները՝ տրանսպորտի հետ կապված նպատակները պետք է նշանակալի ազդեցություն չունենան տրանսպորտի մեկ տեսակից մյուսին անցման վրա, ինչը ենթադրում է, որ մասնավոր տրանսպորտային միջոցներից օգտվողները կառնչվեն ոչ խիստ սահմանափակումների և խափանումների հետ:

Այսպիսով, ավտոկայանման կարճաժամկետ ռազմավարությունը չի հետապնդում տրանսպորտի վրա ազդեցություն ունենալու ուղղակի նպատակ: Երկարատև ժամանակահատվածի համար, եթե Գյումրու կենտրոնում գրանցվի մասնավոր մեքենաների օգտագործման աճ, մենք կառաջարկեինք ընդլայնել ռազմավարությունը՝ խրախուսելով քաղաքացիներին անցում կատարել կայուն տարբերակի: Հաշվի առնելով աճող պահանջարկն ու գերբեռնվածությունը՝ Գյումրի համայնքի երկարաժամկետ ռազմավարությունը պետք է ավելի զգալի տեղաշարժ նախատեսի դեպի հասարակական տրանսպորտ:

Դասեր	Ցածկման	Երևանի	(Հայաստան)
Օրինակից			
Համայնքի մայրաքաղաքում կողմնակայանման ռազմավարության ներդրման ժամանակ, երբ նախատեսվում է մասնավոր տրանսպորտից ազդեցություն հասարակական տրանսպորտի ռազմավարության նպատակն էր ավտոկայանման կառավարումը, այլ ոչ թե պայքարը գերբեռնվածություն դնել:			
Գյումրին պետք է նույնպես նման մոտեցում ցուցաբերի, սակայն երկարաժամկետ տեսլականը պետք է ներառի համապարփակ տրանսպորտային ռազմավարություն, որը կդրադրվի համայնքի տրանսպորտը որպես մեծություն ռեժիմ:			

Բացի այդ, Խորհրդատուն առաջարկում է ստեղծել համապարփակ տրանսպորտային ռազմավարություն, որը կներառի տարբեր կայուն փոխադրման տարբերակներ: Այս տեսլականում հասարակական տրանսպորտը պետք է լինի տրանսպորտային ցանցի կենտրոնը:




A-B-C ինդեքս	A (Մնացում ՀՏ-ի)	B (Որոշակի անցում ՀՏ-ի)	C (Շկա անցում ՀՏ-ի)
--------------	------------------	-------------------------	---------------------

5.1.2 Երթևեկության և հասանելիության նպատակներ

Ավտոկայանման ներկայիս ռազմավարությունը զգալիորեն խոչընդոտում է երթևեկությանը և առաջ քերում անվտանգության և հասանելիության հետ կապված մի շարք խնդիրներ: Հետիոտները ստիպված են մանևրել մայրերին ապօրինաբար կայանված մեքենաների միջև, իսկ այնպիսի բանուկ հատվածներում, ինչպիսին է գլխավոր հրապարակին հարող շուկան, երթևեկությունը խաթարվում է փողոցների երկու կողմերում կայանված մեքենաների պատճառով: Ի հավելում, ավտոկայանատեղերը երբեմն շատ մոտ են խաչմերուկներին, ինչն առաջացնում է տարածքի սահմանափակում թե՛ վարորդների, թե՛ հետիոտների համար՝ կրճատելով խաչմերուկների տարողունակությունը: Բացի այդ, որոշ հատվածներում, որտեղ տեղի է ունենում կրկնակի կայանում, կա մայրերը լայնացնելու անհրաժեշտություն (օրինակ՝ պատմամշակութային կենտրոնի կամ շուկայի շրջակայքում):

Դաներ՝ քաղված Օսլոյի (Նորվեգիա) օրինակից:
Ցեղանորոշում կա ճանապարհորդային երթևեկության հոսք՝ ապահովելու և մեքենաների, անսահման վաղմա՝ ուղղությամբ: Այն, սղոնցմանը համապատասխան՝ քաղաքը, փորձում է կանխել մեքենաների կայանումը՝ քաղաքում, որտեղ գիտվում է խիստ գերբեկցածություն: Այնպես ժամանակ, հետիոտների համար կան հատուկ ստիպանված քայլուղիներ, որոնք ապահով են և ունեն քաղաքապետարանը:
Գլխավորում՝ անցք է ման, շեշտը ոչ ու ճանապարհային՝ անվտանգության և հետիոտների համար՝ ճանապարհորդների հասանելիության ապահովման վրա:

Վերը թվարկված գործոններն առաջացնում են այնպիսի ռազմավարության մշակման անհրաժեշտություն, որը կբարելավի երթևեկությունը բոլոր շահառուների (վարորդների և հետիոտների) համար՝ բարելավելով ճանապարհների անվտանգությունը: Հետիոտների անվտանգությունը գտնվում է այս հարթության կենտրոնում, և հստակ սահմանված ավտոկայանատեղերը պարտադիր են անխափան երթևեկության հոսք ապահովելու համար:



A-B-G խնդր	A (Երթևեկության վրա ազդեցություն)	B (Սահմանափակ ազդեցություն)	C (Ազդեցության բացակայություն)
------------	-----------------------------------	-----------------------------	--------------------------------


5.1.3 Եկամուտ ստեղծելու նպատակ

Ավտոկայանատեղերի նախագծերը համարվում են համայնքապետարանի համար եկամտի առավել ընդունված աղբյուրներից: Սոցիալական շահագրգռվածությունը հիմնված է այն դիտարկման վրա, որ վարորդները (հիմնականում առավել ապահով խավի) պետք է վճարեն համայնքի ավտոկայանատեղերի տարածքի օգտագործման համար առավել թանկարժեք հատվածներում, որտեղ առաջարկը սահմանափակ է: Հատկանշական է նաև, որ ավտոկայանատեղերից ստացվող

Գումարը ծախված Հայֆայի (Ինքնաշարժ) օրինակից Ռազմավարությունը հստակորեն սիտված է եկամտի գոյացմանը: Տոմսերի, վաճառքից և տուրքերից ստացվող եկամուտը կազմում է քաղաքապետարանի տարեկան քույզի ներկայումս կապվածը: Ըստ վերջին տվյալների՝ քաղաքապետարանին ազդեցիկ գնացողացման համար: Գյումրիում վրանկանությունը շատ տարբեր է: Գնագոյացումը պետք է անում լիարժեք վարորդների պատրաստակամությունը: Ավտոկայանատեղերի համար և դրա եկամուտը անհրաժեշտ է իջնոցների անվտանգությանը:

եկամուտները մեծ մասամբ վերաբաշխվում են և ուղղվում ճանապարհների որակի ընդհանուր բարելավմանը և հարակից ծառայություններին:

Թեև Գյումրի համայնքը կարիք ունի դիվերսիֆիկացնելու իր եկամտի աղբյուրները և ընդլայնելու համայնքի թյուզեն, ներկայիս իրավիճակը, որտեղ ավտոկայանատեղերն անվճար են, խնդիրներ կստեղծի այդ կարիքները հոգալու հարցում, և նոր վճարովի ավտոկայանման ներկայացումը թերահավատությամբ կընդունվի հասարակության կողմից: Այս մտահոգության հիման վրա խորհրդատուն առաջարկում է գործնականորեն կայուն մոդել, որը կծածկի ավտոկայանման ռազմավարության ծախսերը: Սա թույլ կտա քաղաքում սահմանել ավտոկայանատեղերի հասանելի սակագներ՝ առանց ավտոկայանատեղերի նախագիծը սուբսիդավորելու: Հասարակությունն ավելի հավանական է, որ ընդունի և հարմարվի այդպիսի գնային սխեմայի: Հետագայում, եթե աճի ավտոկայանատեղերի պահանջարկը, բարելավվեն քաղաքացիների ֆինանսական պայմանները և հնարավոր լինի ավելի բարդ ավտոկայանման տեխնոլոգիական մակարդակի պահպանումը, կարող է դիտարկվել առավել եկամուտ ստանալուն միտված ռազմավարություն:



5.1.4 Ռազմավարական նպատակների ամփոփում

Ավտոկայանատեղերի առաջարկվող սխեման պետք է նպատակաուղղված լինի երթևեկության բացասական ազդեցության նվազեցմանը և հետիոտների համար հասանելիության բարելավմանը՝ Մասնավորապես, այն պետք է նպատակաուղղված լինի ավտոկայանման կառուցվածքային կազմակերպմանը, որպեսզի ստեղծվեն լավ կառավորված ավտոկայանատեղեր, որոնք կապահովեն երթևեկության և հետիոտների անվտանգությունը: Ռազմավարությունը պետք է ֆինանսապես կայուն լինի, ինչը նշանակում է, որ ռազմավարության ամսական անխափան իրագործման համար չի

պահանջվելու համայնքային սուբսիդավորում: Եթե ավտոկայանման սխեման հաջողությամբ ներկայացվի և պահանջարկն աճի երկարաժամկետ հեռանկարում, ապա պետք է նախատեսել ավելի եկամտաբեր ռազմավարություն: Նմանապես, եթե հետագայում քաղաքի կենտրոնում մեքենաների աճին զուգընթաց բարելավվի հանրային տրանսպորտի ծառայությունը, պետք է դիտարկել սակագների վերանայման և աշխարհագրական շրջանակն ընդլայնելու տարրերակը, որպեսզի մասնավոր մեքենա վարողներն անցում կատարեն կայուն տարբերակի:

	Ներկայիս (2018)	Կարճաժամկետ (2019-2023)	Երկարաժամկետ (2024-2028)
Ռազմավարական			
Տրանսպորտ	C	C	B
Երթևեկություն և հասանելիություն	C	A	A
Եկամտաբերություն	C	B	A/B

5.2 Մարտավարական բնութագրիչներ

5.2.1 Աշխարհագրական ընդգրկման սահմանումը

Փողոցային ավտոկայանում

Խորհրդատուն առաջարկում է ավտոկայանատեղերի ռազմավարության շրջանակներում անդրադառնալ երթևեկության բոլոր խնդիրներին՝ միևնույն ժամանակ պահպանելով ռազմավարության պարզ և մատչելի լինելը: Այդ նպատակով խորհուրդ է տրվում ավտոկայանման ռազմավարությունն իրականացնել՝ կենտրոնանալով այն հիմնական ուղղությունների վրա, որտեղ երթևեկությունն առավել խնդրահարույց է: Հետևյալ քարտեզներում նկարագրվում են այն տարածքները, որտեղ ավտոկայանումը պետք է կարգավորվի: Ինչպես նշվել է Խորհրդատուի կողմից, այդ շրջանակում է նախատեսվում մինչև 2028 թվականը կանխատեսվող ժամանակահատվածի ավտոկայանման սխեման: Հետագայում առավել լայն աշխարհագրական ընդգրկում պետք է

Դասեր, քաղված: Բաթումիի (Կիսպոս)
Ժրինակից


Բաթումիի ավտոկայանման սխեման ներկայումս ներառում է երթևեկության հոմոնական կետերը: Շրջանակը՝ կիրառվում է անտեղ, որտեղ ավտոկայանման համակարգի մոնիթորինգը է Ռազմավարությունը շրջանակի ընդլայնում է դիտարկում: Երբ համայնքապետարանը դա անհրաժեշտ կհամարի:

Գյումրին կարող է օրդեգրել նման մոտեցում: Այսպիսի կիրառման ատամնելությունն է այն, որ բնակչությունը ժամանակ կունենա հազմաքանակի փոփոխությանը:

Քաղաք Գյումրի - Ավտոկայանատեղերի ռազմավարություն և գործողությունների պլան	Ավտոկայանատեղերի հստակեցություն	ռազմավարության	վերջնական
--	------------------------------------	----------------	-----------

Նախատեսել, եթե ավտոկայանատեղերի պահանջարկն աճի, և համայնքապետարանը ցանկություն հայտնի ավտոկայանման ռազմավարությունը կիրառել՝ տրանսպորտը կարգավորելու և վարորդներին խրախուսելու օգտվել հանրային տրանսպորտից:

Քարտեզ 5.1 Գյումրու ուղղամվարության շրջանակների քարտեզը Անիում, Գյումրու կենտրոնում և
օդանավակայանի մոտ




Արտափողոցային ավտոկայանում

Հիմնվելով հարցումների ընթացքում արձանագրված բարձր զբաղվածության, ճանապարհների վերականգնման առաջարկված պլանի և «Կոմայրի» պատմական կենտրոնի ու Շուկայի մերձակա տարածքների հետիոտնացման վրա՝ պետք է դիտարկվի արտափողոցային ավտոկայանատեղերի ստեղծումը: Հաջորդիվ ներկայացված քարտեզները ցույց են տալիս այն պոտենցիալ տարածքները, որոնք կարող են օգտագործվել որպես արտափողոցային ավտոկայանատեղեր, որոնք քայլելու հեռավորության վրա են գտնվում վերոնշյալ տարածքներից:

Ստանդարտ փորձը յուրաքանչյուր ավտոկայանատեղի համար սահմանում է 25 քմ անհրաժեշտ տարածք: Խորհրդատուն առաջարկում է արտափողոցային երկու ավտոկայանատեղ՝ յուրաքանչյուր տարածքի համար մեկական և յուրաքանչյուրում 100 ավտոկայանատեղ կամ ընդամենը՝ 200 ավտոկայանատեղ: Սա նշանակում է 2,500 քմ ամեն ավտոկայանատեղի համար: Ստորև աղյուսակը ցույց է տալիս այն հնարավոր տարածքները, որոնք կարող են գործի դրվել որպես «Կոմայրի» պատմական կենտրոնից դուրս փողոցի ավտոկայանատեղ: Հաջորդ աղյուսակը ցույց է տալիս «Կոմայրի» պատմական կենտրոնում պոտենցիալ տարածքներ, որոնք կարող են ծառայել որպես արտափողոցային ավտոկայանատեղեր:


Քարտեզ 5.2 Կոմայրի պատմամշակութային կենտրոնի և Շուկայի շրջակայքում արտափողոցային ավտոկայանատեղերի պոտենցիալ տարածքներ



Աղյուսակ 5.1 «Կոմայրի» պատմական կենտրոնում արտավթողցային ավտոկայանատեղերի պոտենցիալ տարածքների ցանկ


	Տեղանքի նկարագրություն	Մոտավոր մակերես	Սեփականատիրություն	Մուտք գլխավոր ճանապարհից	Խաչվող տեսներ
Կետ #1	Կաղանի ալտերնատիվ	1500 քմ	Մասնավոր	Առկա է	Որոշ ճանապարհներից հեռացված
Կետ #2		225 քմ	Մասնավոր	Առկա է	Առկա չեն
Կետ #3	Ռոստավելի և Գրիկի փողոցների միջև հովհաննես Երուզցի թանգարանի հետևում	150 քմ	Անհայտ	Առկա է	Տնտեսական օգտագործման անհնար է հեռացվել
Կետ #4	Ռոստավելի և Շահումյան փողոցների անկյուն	150 քմ	Մասնավոր	Առկա է	Առկա չեն
Կետ #5	Ռոստավելի փ. - Սբ. Նշանի դիմաց	120 քմ	Մասնավոր	Առկա է	Առկա չեն
Կետ #6	Սբ. Նշանի մերձակա տարածք	200 քմ	Մասնավոր	Առկա է	Տարածքում փոս կա
Կետ #7	Ղորղանյան և Արուսյան փ.երի միջև	1500 քմ	Մասնավոր	Առկա է	Կարող է լինել փակում է
Կետ #8	Ղորղանյան և Արուսյան փ.երի միջև	150 քմ	Անհայտ	Առկա է	Բնակավայրությունը պետք է հեռացվի
Կետ #9	Ռոստավելի և Դեդոյանցի փ.երի անկյունը	225 քմ	Մասնավոր	Առկա է	Առկա չեն
Կետ #10	Ռոստավելի և Զիվանի փ.երի անկյուն Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու դիմաց	200 քմ	Մասնավոր	Առկա է	Տարածքում կան փառակներ
Կետ #11	Զիվանի և Օգանյան փ.երի միջև Եղիշատի թանգարանի հետևում	2000 քմ	Մասնավոր	Առկա է	Առկա չեն
Կետ #12	Ռոստավելի և Օգանյան փողոցների անկյունը	2000+ քմ	Մասնավոր (վաճառվում է)	Առկա է	Տարածքն անհարթ է, բնակավայրությունը պետք է հեռացվի

Գնդ	Օգտակար փ. - Իրի հիմնարկների անվանների սին	2500+ քմ	Մասնավոր (վաճառվում է)	Առկա է	Տարածքն անհարթ է և կա իր շինություն (տնային)
Կետ #13	Գայի և Հակոբյան փ.-երի անկյուն - Նենսի սրճարանի դիմաց	100 քմ	Մասնավոր	Առկա է	Առկա չեն
Կետ #14	Գայի և Լորդանյան փ.-երի անկյուն - Արդշինյանի հիմնարկություն	100+ քմ	Մասնավոր	Առկա է	Տարածքն անհարթ է, բուսերը պետք է հեռացվեն
Կետ #15	Գայի փ. - Վթերային խանութի դիմաց - մոտքը Լորդանյան փ. ճից	600 քմ	Անհայտ	Առկա է	Տարածքն անհարթ է, բուսականությունը պետք է հեռացվի
Կետ #16	Արմալու հյուրանոցի մոտ	100 քմ	Մասնավոր	Առկա է	Բուսերը պետք է հեռացվեն
Կետ #17	Արմալու հյուրանոցի դիմաց	2500+ քմ	Անհայտ	Առկա է	Առկա են մասնավոր ավտոկայանատեղեր




A-B-C խմբեր	A. Ողջ քաղաքում	B. Որոշակի թիրախային տարածքներ	C. Չկա թիրախային տարածք
-------------	-----------------	--------------------------------------	----------------------------

Քարտեզ 5.3 Առաջարկվող հապույտ գոտու տարածքները Անիի շրջանի և Գյումրու Հյուսիսային հատվածի համար



Քարտեզ 5-1 Առաջարկվող Կապույտ գոտու տարածքները Գյումրու Կենտրոնական և Հարավային հատվածի համար



Կապույտ գոտի և Կարմիր գոտի

Եթե հետագա փուլում համայնքապետարանը կտեսնի գոտևորման սխեմայի ընդլայնման անհրաժեշտություն, Խորհրդատուն առաջարկում է երկարաժամկետ հեռանկարում ստեղծել **Կարմիր գոտի**: Այս գոտին կներառի ամենաբարձր պահանջարկ ունեցող ճանապարհները: Այս փոփոցներում վարորդները կարող են կայանել 3 ժամ սահմանափակ ժամանակով (09:00-19:00): Այս սահմանափակումների նպատակը կենտրոնական հանգույցների կողքին սահմանափակ ավտոկայանատեղերը խելացի կերպով օգտագործելն է, ինչպես նաև այդ տարածքների մոտ

կարճատև այցելուների կայանումները խրախուսելը, իսկ ամբողջ օրը կայանող մեքենաների վարորդներին ստիպել կայանել առավել քիչ պահանջարկ ունեցող վայրերում: Այս ընդլայնումը, այնուամենայնիվ, ներառում է էական տեխնոլոգիական արդիականացում, որպեսզի ապահովի լավ կիրարկում: Որպես այդպիսին, այս գոտու ներկայացումը կարող է համայնքապետարանի համար շահավետ լինել միայն Կապույտ գոտու սխեմայի հաջողությամբ իրականացումից հետո, երբ բնակչությունը ժամանակ ունեցած լինի հարմարվելու վճարովի ավտոկայանմանը և պահանջարկը աճի: Սա կարդարացնի լրացուցիչ ներդրումները: Բացի այդ, համայնքապետարանը պետք է նախատեսի ավելի բարդ գոտևորման համակարգով համապարփակ


Դասեր ըստ Հայֆայի (Եսթայի) օրինակից

Հայֆայի բնակելի տարածքներում ավտոկայանատեղերի մեծ մասը ազատ է և ստեղծում է գորշ գույնի գծերով: Բիզնես կենտրոններ, հիվանդանոցներ, դպրոցներ և այլ հանրային տարածքներ, որոնք սահմանվում են բարձր պահանջարկով, կազմում են վճարովի ավտոկայանման սխեմայի մի մասը: Շատ բարձր պահանջարկ ունեցող տարածքներ, համար սակագներն ավելի ագրեսիվ են, ավելի բարձր շրջանառություն խրախուսելու և վարորդներին իրենց ավտոմեքենաներով այդ տարածքի մոտեցող մանիքեր համար:


Չնայած, որ Գյումրիում դինամիկ սակագների անհրաժեշտություն չկա, քաղաքը կարող է նման մոտեցում որդեգրել: Քաղաքի շատ տարածքներում չկա վճարովի ավտոկայանատեղերի պահանջ, և բնակիչները դրանք են արձագանքի դրսև: Այնուամենայնիվ, թերմալային տարածքները պետք է որոշակի կայանման սահմանափակումներ ունենան:


տրանսպորտային ռազմավարություն, որով կարելի է խթանել անցումը այլընտրանքային տրանսպորտային տեսակների՝ ելնելով պահանջարկից: Հետևյալ քարտեզները պատկերում են երկգոտի սխեմայի (Կապույտ գոտի և Կարմիր գոտի) տարածքները: Սխեման Կապույտ գոտու համար նախատեսում 19.9 կմ ճանապարհ, իսկ Կարմիր գոտու համար՝ 7.1 կմ ճանապարհ:

Քարտեզ 5-5 Առաջարկվող երկգույտի տարածքները Անիի շրջանի և Գյումրու Հյուսիսային հատվածի համար



Քարտեզ 5-2 Առաջարկվող երկգոտի տարածքները Գյումրու Կենտրոնական և Հարավային հատվածի համար






5.2.2 Ժամանակահատվածի սահմանում

Ի հավելումն վերը ներկայացված երկգոտի նախագծի, խորհրդատուն առաջարկում է բոլոր ավտոկայանատեղերը ներառել նախագծի շրջանակում՝ կարգավորելով երկու շաբթիկից ուրբաթ, 09:00 - 19:00 սահմաններում: Երկու ժամկետներից ավտոկայանատեղի վճար չի պահանջվում: Սա վերաբերում է ռազմավարության ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ փուլերին:

Վազեր քաղաքի (Բելգիա) օրինակից

Բաղաձոր տարրեր ժամանակահատվածներ է կիրառում տարրեր կառուցման գոտիների համար: Մինչև քաղաքի պահանջարկումները տարածքները պահանջում են 24 ժամանակահատված, սակայն քաղաքի տարածքները սահմանափակվում են աշխատանքային օրերով և աշխատանքային ժամերով:

Գյումրու համար նման բարդության բարձր մակարդակի անհրաժեշտ չէ, քանի որ սահմանափակումները պետք է խելամիտ լինեն և արտացոլեն իրական պահանջարկը: Սա նշանակում է որ սխեման կարող է ազատել վարորդներին վճարումներից եթե չկա ուղի անհրաժեշտությունը: Կայանման միանալի աշխատանքային օրերով և աշխատանքային ժամերում սահմանափակելը աշխարհում սովորական քննուկված պրակտիկա է:



A-B-Գինը	A (Խիստ սահմանափակում)	B (Որոշակի սահմանափակում)	C (Անսահմանափակ)
----------	------------------------	---------------------------	------------------

5.2.3 Սակագների կառուցվածքը և դրույքաչափերը

Ինչպես սահմանված է ռազմավարական մակարդակում, որտեղ կայուն մոդելը պետք է հարմարեցվի կայանման սխեմային, սակագների կառուցվածքը պետք է արտացոլի այդ ուղեցույցը: Այս նպատակին ուղղված միջոցներից է համայնքապետարանի՝ վարորդներին մատչելի գներ առաջարկելու ցանկությունը: Հետևաբար, սակագների կառուցվածքը հաշվի է առնում կայանման սխեմաների ներդրման և պահպանման ծախսերը և նպատակ ունի առաջարկել համապատասխան սակագներ, որպեսզի սխեման մնա կայուն՝ առանց սուբսիդավորում ստանալու: Այս միջոցառումների և բազմաթիվ այլ փոփոխականների համակցությամբ՝ ներառյալ ավտոկայանման սովորությունների հարցման, տնտեսական վերլուծության տվյալները, և, համեմատելով Երևանում սակագների կառուցվածքի և իրավական դաշտի հետ, Խորհրդատուն բաժանեց սակագների կառուցվածքը փողոցային և արտափողոցային ավտոկայանման երկու կատեգորիաների:

Փողոցային ավտոկայանում

Քանի որ մեծ թվով վարորդներ պարբերաբար կայանում են Գյուրիում և չեն ցանկանա հաճախակի պիտակներ գնել, Խորհրդատուն առաջարկում է խրախուսել տարեկան բաժանորդագրության ձեռքբերումը: Այս առաջարկը հիմնված է անցկացված պահանջարկի և ավտոկայանման սովորությունների վերաբերյալ հարցումների և տնտեսական վերլուծության հիման վրա, մասնավորապես՝ Երևանի համեմատ Գյուրիում բնակչության շրջանում ցածր եկամուտների մակարդակի հիման վրա: Բացի այդ, կան զգալի քանակի ավտոկայանատեղերից օգտվողներ (օրինակ՝ Գյուրուց դուրս), որոնք

ավելի շատ ճկունություն են պահանջում և ավելի քիչ դեպքերում են օգտագործում ավտոկայանատեղերը: Ավտոկայանման սովորույթների հարցումը ցույց է տվել, որ կարճաժամկետ կայանումների մեծ մասը տևում է մեկ ժամ կամ ավելի քիչ: Հետևաբար, հորիզոնատուն առաջարկում է սակագները բաժանել չորս կատեգորիաների՝ ժամային, օրական, ամսական և տարեկան: Սա ավտոկայանման ռազմավարությունների համար ստանդարտ պրակտիկա է:

Հաշվի առնելով վերոնշյալ վերլուծությունը՝ հորիզոնատուն առաջարկում է սակագների հետևյալ կառուցվածքը, որտեղ նկատվում է տարեկան բաժանորդագրության հստակ խթանում:


Բաժանորդագրություն Արժեք (<< դրամ)


Ժամային	100
Օրական	300
Ամսական	1500
Տարեկան	7500

Երկարաժամկետ հեռանկարում, քաղաքապետարանը պետք է որոշի երկու գոտի սխեմայի ներմուծումը. ժամանակի սահմանափակումներ ունեցող Կարմիր գոտին պետք է ունենա ավելի ագրեսիվ գնային քաղաքականություն: Այս գոտու սակագները պետք է սահմանվեն, երբ գործող սխեման արդիականացնելու որոշում կայացվի, և երբ ավելի շատ գիտելիքներ առկա կլինեն, թե ինչպես է իրագործվում գործող ավտոկայանման սխեման:

Արտափողոցային ավտոկայանում

Արտափողոցային ավտոկայանատեղերի հիմնական նպատակն է պատասխանել բարձր պահանջարկին այնպիսի վայրերում, ինչպիսիք են Շուկան և «Կուժայրի» պատմամշակութային կենտրոնը: Հետևաբար, այդ ավտոկայանատեղերում առաջարկվող բաժանորդագրությունը պետք է լինի միայն օրական տոմսերի տեսքով: Արժեքը պետք է ավելի բարձր լինի, քան փողոցային ավտոկայանատեղերի տոմսի արժեքը՝ հաշվի առնելով արտափողոցային ավտոկայանատեղերի սպասարկման ծախսերը և կայանատեղերի շահագործման համար մասնավոր կապալառուների ներգրավման խնդիրները: Արտափողոցային ավտոկայանատեղի առաջարկվող օրական սակագինը 800 << դրամ է:





A-B-C ինդեքս	A (Գինամիկայադաշտային)	B (Ստատիկ, միջին սակագին)	C (Ստատիկ, պարզ մատչելի)
--------------	------------------------	---------------------------	--------------------------

5.2.4 Մարտավարական բնութագրիչների ամփոփում

Մարտավարական որոշումներն առաջնորդվում են պարզ եւ մատչելի ռազմավարություն ստեղծելու պատրաստակամությամբ, որը կարող է լավագույնս նախատեսել նախորդ բաժնում նկարագրված ռազմավարական նպատակներին հասնելու համար շրջանակը: Սա ներառում է ավտոկայանման սխեմայի կիրառումը կոնկրետ առանցքային տարածքներում և պարզ մեկ գոտի ունեցող սխեմայի իրականացումը: Պահանջարկի հետ կապված հարցերը լավագույնս լուծելու համար այս սխեման պետք է կիրառվի միայն աշխատանքային օրերին և ժամերին: Վերջապես, սակագնի կառուցվածքն առաջնորդվում է օգտվողների համար մատչելի լինելու և քաղաքի համար կայուն լինելու սկզբունքով:

	Ներկայիս (2018)	Կարճաժամկետ (2019-2023)	Երկարաժամկետ (2024-2028)
Մարտավարական			
Աշխարհագրական ընդգրկում	C	B	B
Կայանման գոտիներ	Կիրառելի չէ	C	B
Ժամկետներ	C	B	B
Սակագնի կառուցվածք	Կիրառելի չէ	C	B

5.3 Գործառնական բնութագրիչներ

5.3.1 Տեխնոլոգիական մակարդակի սահմանումը

Այսօր տեխնոլոգիաները ցանկացած նախագծի մասն են կազմում. տեխնոլոգիաների տրամադրած հնարավորությունների լայն շրջանակը ներառում է տարրական կիրառություններից մինչև ամբողջապես ավտոմատացված գործընթացներ: Տեխնոլոգիական տարբեր համակարգեր գնահատելիս պետք է հաշվի առնել մի շարք գործոններ: Ավտոկայանատեղերի ռազմավարության շրջանակներում տեխնոլոգիաները կիրառվում են տարբեր՝ քիչ թե շատ մյուսների հետ կապված ասպեկտներով.

- վճարման միջոց
- կիրարկում
- բիլինգ և հաշվետվողականություն
- տվյալների վերլուծություն:

Առաջարկվող գործառնական նպատակների և, հետևաբար, արդեն նշված ռազմավարական և մարտավարական բնութագրիչների վերաբերյալ առաջարկությունների շրջանակները սահմանելու նպատակով հորհրդատուն մանրամասնորեն հաշվի է առել հետևյալ չափորոշիչները.

- Իրականացման ծախսեր/ պոտենցիալ եկամուտներ
- Վճարումից մինչև բիլինգ շրջանի ամբողջականություն
- Իրականացման և պահպանման բարդություն
- Ճկունություն (Գյուրի համայնքի և նրա ավտոկայանատեղերի ռազմավարության հետ զարգանալու ունակություն)
- Տեխնիկական սահմանափակումներ (եղանակային պայմաններ, ցանցի կարողություն, սմարթֆոնների ներթափանցում, ...)
- Օգտվողների կողմից հավանությունը և յուրացման հեշտությունը
- Գործառնականությունների (տեխնոլոգիական) փոխանցման հնարավորություն:

Այս բոլոր բաղադրիչները հաշվի են առնվել, և մինչ որևէ հատուկ տեխնոլոգիական լուծում առաջարկելը հորհրդատուն ներկայացնում է հետևյալ ընդհանուր առաջարկությունները՝

- Ավտոկայանատեղերի ռազմավարության համար առաջարկվող աշխարհագրական ընդգրկումը չի պարտադրում կառավարման նպատակով տեխնոլոգիաների ինտենսիվ օգտագործում:
- Նշանակալի ներդրումները պետք է մանրամասն կշռադատվեն եկամուտներ ստանալու հեռանկարով (ծախսերի և օգուտների վերլուծություն):
- Կանխիկով վճարումներից կամ այլ գործարքներից պետք է հնարավորինս խուսափել:
- Նախագծի գործունեությունը պետք է համեմատաբար հեշտ վերահսկելի լինի, քանզի տվյալները պետք է հասանելի լինեն համայնքապետարանին վերլուծությունների համար:
- Վճարման միջոցները պետք է հասանելի լինեն բոլոր օգտվողների համար՝ հավանաբար ենթադրելով վճարման տարբեր միջոցների համադրումը:
- Նախագծի բարդությունը օգտվողների համար պետք է հասցվի նվազագույնի, ինչպես նաև ընթացքում պետք է օգտվողներին աջակցություն ցուցաբերել:

Վճարում

Այսպիսով, առաջարկվող տեխնոլոգիաները ներառում են ինչպես ֆիզիկական պիտակներ, որոնք կարող են ձեռք բերվել քաղաքի կրպակներից, այնպես էլ հատուկ մշակված բջջային հավելված, որի միջոցով հնարավոր կլինի վճարել ավտոկայանման ժամային, օրական, ամսական կամ տարեկան բաժանորդագրության համար:


Կիրարկում

Ավտոմատացված գործընթացների միջոցով հարկադիր կատարման բարձր մակարդակի ապահովումը պահանջում է խոշոր ներդրումներ տեխնոլոգիական սարքավորումների և դրանց շարունակական սպասարկման համար: Ընդհանրապես, դա կապված է նաև բարձրակարգ անձնակազմի վերապատրաստման հետ: Գյումրիում կիրարկման նման աստիճանի կիրառումը դժվար թե հնարավոր լինի հիմնավորել, ինչպես մանրամասն նկարագրված է Հավելված 7-ում, որտեղ գնահատվում են տարբեր տեխնոլոգիական մակարդակների երեք սցենարներ: Խորհրդատուն առաջարկում է ավտոկայանատեղերի հսկիչներին ապահովել պետհամարանիշների գրանցման «Ավտոմարշալ» ծրագրով հագեցած պլանշետներով: Ավտոկայանման սխեմայի հետագա ընդլայնումը, օրինակ, երկրորդ գուռու (Կարմիր գուռի) ներդրմամբ կարող է հիմնավորել տեխնոլոգիական արդիականացումը՝ սխեմայի համապատասխանության ապահովման համար:

Դասերը՝ քաղված են հանր. (Հայաստան) օրինակից

Քաղաքում տեղադրված են հատուկ տեխնոլոգիաներ, և վարորդները կարող են ավտոկայանման համար վճարել կարճ՝ հաղորդագրության կամ վճարման հավելվածների միջոցով, սակայն ոչ մի հատուկ բջջային հավելված առկա չէ: Կիրարկումն իրականացվում է ավտոկայանատեղերի հսկիչների կողմից տեխնոլոգիաների միջոցով:

Պիտակների տրամադրման նմանատիպ մեթոդ կիրառվում է նաև Գյումրիում հատուկ մշակված բջջային հավելվածով, ինչպես նաև ֆիզիկական կպչուն պիտակներ՝ ձեռք բերելու տարբերակով: Կիրառվում է CC-TX տեխնոլոգիաների կիրառման միջոցով, սակայն, շատ ծախսատեղյակ է և չի կարող կիրառվել առաջին փուլում:



5.3.2 Կիրարկման և տուգանքների սահմանում

Կիրարկման մակարդակը պետք է համապատասխանի դրված նպատակներին և առկա կարիքներին ու պետք է իրագործվի պաշտոնապես և թափանցիկ ձևով:

Իրավիճակի վերլուծության արդյունքում Խորհրդատուն հավատացած է, որ Գյուժրիում կիրարկումը պետք է հետապնդի 2 նպատակ՝

- Ապահովել կարգավորվող ավտոկայանատեղերում կայանված մեքենաների համապատասխանությունը
- Բացահայտել և ծանուցում ուղարկել ապօրինի կայանված մեքենաների վերաբերյալ, մասնավորապես՝ երթևեկությանը խոչընդոտող կամ վտանգավոր վարքագիծ ցուցաբերող (հետիոտների կամ վարորդների համար խոցելի իրավիճակ հարուցող):

Հիմնվելով տարողունակության համեմատ ծանրաբեռնվածության ներկայիս իրավիճակի վրա՝ Խորհրդատուն առաջարկում է Կապույտ գոտում կիրարկումն իրականացնել օրական 2-3 անգամ:

Նախագծի ներդրման առաջին փուլի, ներառյալ՝ հարաբերականորեն երկարատև անցման փուլի (3-ից 6 ամիս) համար Խորհրդատուն առաջարկում է կիրառել պատժամիջոցների տեսանկյունից առավել «մեղմ» կիրարկում: Կիրարկում իրականացնող աշխատակիցների շրջանում պետք է խրախուսել վարորդների հանդեպ մանկավարժական կեցվածքը, ինչպես նաև նախագգույնացումների կիրառումը՝ նախքան տուգանքներ սահմանելը: Հետագա Կարմիր գոտու համար պետք է կիրառվի առավել ինտենսիվ կիրարկում՝ նվազագույնը օրական 4 անգամ:

ինչ վերաբերում է տուգանքների կառուցվածքին, հստիքդատուի կարծիքով տուգանքների մեծությունը պետք է համաչափ լինի խախտումների արժեքներին, որպեսզի դրանք ծառայեն իրենց նպատակին՝ առանց ավելորդ անգամ հարուցելու վարորդների դժգոհությունը. ինչը կարող է տուգանքը վճարելու փոխարեն հանգեցնել դրա բողոքարկմանը՝ ընդհուպ դատարան դիմելուն:


Հստիքդատուն առաջարկում է ավտոկայանման վճարումը չկատարելու համար կիրառել ֆիքսված 2,000 ՀՀ դրամ տուգանք:


Հստիքդատուն նաև առաջարկում է արագ վճարումների դեպքում կիրառել զեղչված տուգանքներ: Նման գործընթացները լայնորեն կիրառվում են ողջ աշխարհում՝ հետապնդելով երկու նպատակ. նվազեցնել վարորդների բացասական տրամադրվածությունը՝ հնարավորություն տալով ավելի ցածր տուգանք վճարել, ինչպես նաև ազատել իրավական ծախսատար գործընթացներից:

Ավտոկայանման պայմանները խախտելու դեպքում տուգանքների վճարման սակագների առաջարկվող կառուցվածքը.

- խախտման առաջին դեպքի համար նախատեսել զգուշացում (նախագծի ներդրումից հետո առնվազն առաջին ամիսների ընթացքում)՝ նշելով խախտման համար նախատեսված տուգանքի չափը,
- ակտ ստանալուց հետո 1 շաբաթվա ընթացքում վճարելու դեպքում նախատեսել տուգանքի համար զեղչ 50% - ով՝ 1000 ՀՀ դրամ,
- ակտ ստանալուց 1 ամիս հետո վճարելու դեպքում նախատեսել տուգանքի ավելացում 10% - ով:

Երբ համայնքապետարանը հարկ կհամարի սահմանել Կարմիր գոտին, այստեղ պետք է կիրառվի առավել խիստ ու հաճախակի կիրարկում: Այս գոտում պետք է նաև դիտարկել ավտոկայանման պայմանները խախտելու տուգանքների առավել բարձր սակագներ:





A-B-C INDEX	A (Բարձր հաճախականություն, բնորոշ տուգանքներ)	B (Հաճախակի կիրարկում, միջին տուգանքներ)	C (Հազվադեպ կիրարկում, ցածր տուգանքներ)
-------------	---	--	---

5.3.3 Բացառությունների սահմանում


Օգտվողների որոշակի խմբերի համար հատուկ պայմաններ սահմանելը կարող է ունենալ մի շարք պատճառներ. թույլ տալ ավելի լավ ինտեգրում և մատչելիություն ճանապարհներից օգտվողների անապահով խմբերի համար, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող անձինք կամ բնակելի թաղամասերի մոտակայքում գտնվող ավտոկայանատեղեր բնակիչների համար: Ավելի շատ խմբեր կարող են հաշվի առնվել բացառությունների կիրառման համար ավտոկայանատեղերից օգտվելիս (շտապ օգնության մեքենաներ, պետական հատվածի աշխատակիցներ և այլն): Գյուրիում

Դասերը քաղված են Օմլոյի (Լոռվեգիստ) օրինակից

Ենթադրյալ, քաղաքում հաշմանդամների համար կան հատուկ նշված ավտոկայանատեղեր: Հաշմանդամ վարորդները կարող են այնտեղ իրենց մեքենաները կայանել անսահմանափակ ժամանակով: Բնակիչները կարող են իրենց մեքենաները կայանել իրենց բնակության վայրի հարևանությամբ, եթե նրանք ունեն տնայնագրաժամկետային թափանցողություն:

Տվյալ փուլում Գյուրիում հաշմանդամների համար հատուկ նշված ավտոկայանատեղեր կամ նույն բնակիչների համար տարեկան բաժանորդագրություններ անհրաժեշտ չեն: Փոխարենը պետք է կիրառվի ընդհանուր քաղաքականությունը, որտեղ հաշմանդամ վարորդները կարող են իրենց մեքենաները կայանել ցանկացած հասանելի տեղում և բնակիչները կարող են իրենց մեքենաները կայանել որոշակի տեղերում անվճար:

ավտոկայանատեղերի ռազմավարության համար հտորհրդատուն առաջարկում է կիրառել անվճար ավտոկայանատեղեր հաշմանդամություն ունեցող վարորդների համար, ինչպես նաև տեղի բնակիչների համար:



5.3.4 Կառավարման կառուցվածքի սահմանում

Հտորհրդատուն առաջարկում է ներկայիս կազմակերպչական կառուցվածքում մի քանի հարմարեցումներ և փոփոխություններ Ավտոկայանատեղերի նախագիծը և դրա կիրառությունները կառավարելու նպատակով՝

- Ավտոկայանատեղերի կառավարման նպատակով ստորաբաժանման ստեղծում: Այն կարող է լինել համայնքապետարանի ներքին ստորաբաժանում կամ պետական ֆինանսավորմամբ մասնավոր կազմակերպություն (անհրաժեշտ է ուսումնասիրել այս առնչությամբ ՀՀ իրավական կարգավորումները, ներկայիս տարածված փորձը և նույնիսկ ԵՄ առաջարկած կարգավորումները):
- Ավտոկայանատեղերի այս ստորաբաժանման և Շանապարհային ստորաբաժանման և ավտոկայանատեղերի կառավարմամբ զբաղվող բաժնի միջև սերտ համագործակցություն, մասնավորապես՝ ավտոկայանատեղերի կառուցման/վերականգնման/ նշագծման/ սպասարկման աշխատանքներում:
- Ավտոկայանատեղերի կառավարման ստորաբաժանման և համայնքապետարանի իրավաբանական բաժնի միջև սերտ համագործակցություն ավտոկայանատեղերի հետ կապված խնդիրների/ բողոքների շուրջ:

Դասեր՝ քաղման Երևանի (Հայաստան) օրինակից

Սկզբում նախատեսվում էր, որ ամբողջ ծրագիրը կիրականացվի մասնավոր կապալառուի կողմից՝ քաղաքապետարանի փորձառության լուրջ կաշիքի օգնությամբ: Համակարգի լիովին հաստատվելուց հետո այն փոխվեց գործառնությունների պատվիրակվում են հսկվարչարարական և կառավարման գործառնությունները իրականացվում են քաղաքապետարանի կողմից:

Նվաճվածությունն այնպես է կիրառվի Գյումրիում: Շանապարհային գործառնությունների աշխատանքը թույլ կտա քաղաքապետարանին վերահսկել ամենակարևոր դրոշմները և թույլ կտա, որ մասնավոր կապալառուները շահավետ ընդնեն ունենան:


Ավտոկայանատեղերի կառավարման ստորաբաժանման կազմում կկազմվի Ավտոկայանատեղերի վերահսկիչների խումբ՝ կիրարկման կառավարչի ղեկավարությամբ: Խմբի անդամները կվերապատրաստվեն և կգինվեն համապատասխան գործիքներով իրենց գործունեությունն իրականացնելու համար:

Հսկիչները չպետք է ներգրավված լինեն որևէ ուղղակի գործառնության մեջ:

Հետևյալ գործառնությունների ցանկը պետք է կառավարվի Ավտոկայանատեղերի ստորաբաժանման կողմից.

- Փողոցներում ավտոկայանատեղերի պայմանների ապահովում և սպասարկում
- Փողոցներից դուրս գործունեություն և համակարգում
- Վաճառքի բաժին (կաշուն պիտակների վաճառք/ պայմանագրեր և գումարների հավաքում)
- Ռեզիդենտների թույլտվություն և բացառությունների կարգավիճակ
- Ֆինանսական գործունեություն և հաշվառում
- Դիմումների և տուգանքների իրավաբանական ծնակերպում
- Ավտոկայանատեղերում իրավական կիրարկում
- Ծրագրի ընդհանուր գործունեություն

Առարկություն	Պահել տեղերի հսկողության տեսի	Կարող է ավտոկայանվել
Փողոցներում ավտոկայանատեղերի սպասանների ապահովում և սպասարկում	Վճարովի ավտոկայանատեղերի տեղի որոշում Ավտոկայանատեղերի տարածքի ստանդարտների սահմանում	Ֆիզիկական, իրազեկում, վերականգնում, որոշումներ և ուղղահայաց ելքագծումների տեղադրում
Փողոցներից դուրս գործունեություն և հասակագրում	Գործունեության արտոնագրի և յոթյուրությունների տրամադրում Գործունեության ստանդարտների և սպասանների սահմանում	Կառուցում, Գործունեություն, Սպասարկում
Արտոնագր կարգավիճակ	Կարգավիճակների և սահմանափակումների սահմանում Բողոքների գիտարկում	Կարգավիճակի տրամադրում և գրանցում
Բաժանորդագրում վաճառք ստացվածներ	Վաճառքի տեսակների և գների սահմանում Տեղեկատվության համաքաղաքում	Վաճառքի գործարարություններ Հաշվառում և հաշվետարարություն
Իրավաբանական ձևակերպում	Ընթացակարգերի սահմանում և վերանայում	Գործունեություն և ձևակերպումներ
Կիրարկում	Ստանդարտների և նպատակների սահմանում Տեղեկատվության և վիճակագրական տվյալների համաքաղաքում Վերահսկում	Վերանայում և ստանդարտներ Գործունեություն Հաշվետարարություն
Ծրագրի ընդհանուր գործունեություն	Գործունեության կապումների սահմանում Ընկերություն և վերահսկում	Ունեություն և վճարում Գործունեությունների համապատասխանից Ֆինանսատնտեսական վերլուծություն (due diligence)
Հանրային իրազեկում	Իրավական հրապարակումներ	Իրազեկման արշավ



A-B-C խմբեր	A (Ամբողջական պատվիրակում)	B (Մասնակի պատվիրակում)	C (Առանց պատվիրակման)
-------------	----------------------------	-------------------------	-----------------------


5.3.5 Իրավական միջավայրի սահմանում

Նախքան ռազմավարության ներդրումը և իրավական կիրարկման կիրառումը անհրաժեշտ է հաշվի առնել իրավական կարգավորումների մակարդակը: Կարգավորման շրջանակն արդեն սահմանված է պետական մակարդակով՝ որոշակի օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով, որոնք ներկայացված են «Դիագնոստիկ» հաշվետվության մեջ և կիրառելի են Գյուրու համար: Այնուամենայնիվ, Գյուրու ավագանու լրացուցիչ որոշումների անհրաժեշտություն կա ավտոկայանատեղերի մունիցիպալ կարգավորումների տեսքով, որպեսզի ավտոկայանման քաղաքականությունը հեշտ իրագործվի:

Գյուրիում ավտոկայանումը կարգավորող ներկայիս իրավական դաշտն առկա է պետական մակարդակով, սակայն Նոր ռազմավարության իրականացման և կիրարկման համար անհրաժեշտ են համայնքային մակարդակով իրավական փոփոխություններ:

Դասեր՝ քաղված Երևանի (Հայաստան) օրինակից

Տեղի ըստ ընդունված ներկայացված օրինակների ուսումնասիրությունների, իրենց միջառնակները, որ Գյուրու պետական մակարդակի մասնակցության ռազմավարության իրականացման միջավայրի սահմանման համար լավագույն օրինակ է Երևանի օրինակի-ուսումնասիրությունը, քանի որ երկու համայնքները նվազագույն են ներդրումները: Բոլոր օրենքները պետք է մոնիթինգվեն՝ միաժամանակ ընդունելով լրացուցիչ կարևոր որոշումներ, որոնք բացահայտեն կիրառելի կլինեն Գյուրու համայնքի համար՝ հնարավորություն ընձեռելով ներկայիս հայանման ռազմավարության ընդունմանն ու իրականացմանը և՛ համապատասխան փոփոխություններին՝ ինչպես Երևանի դեպքում:



A-B-C համալիր	A (Կարևոր իրավական փոփոխություններ)	B (Աննշան իրավական փոփոխություններ)	C (Իրավական փոփոխությունների ամփոփում/նույնություն չկա)
---------------	---	---	--

5.3.6 Հանրային իրազեկման միջոցառումներ

Հանրային իրազեկումը պետք է նախագծի իրականացման վաղ փուլում հաշվի առնել, որպեսզի նախագիծը հաջողության հասնի:


Գյուրիում ավտոկայանման ընթացիկ սխեման «ազատ» և «անսահմանափակ» է. և նոր սահմանափակումների կիրառումը կարող է օգտավորների շրջանում առաջացնել դժկամություն և նույնիսկ դիմադրություն բնակչության մի մասի շրջանում:

Այդ իսկ պատճառով կարևոր է, որ համայնքապետարանը պատշաճ կերպով կապ հաստատի բնակչության հետ և հատուկ ուշադրություն դարձնի ծրագրի իրականացման պլանի վերաբերյալ բնակչության իրազեկմանը թե՛ ծրագրի իրականացման փուլից առաջ և թե՛ դրա ընթացքում:

Դասեր՝ քաղված Իքսելի (Բելգիա) օրինակից

Քննարկում կա ընդունման կենտրոն, վճարման, գումարների տրամադրման և այլ ծախսերի կատարման համար Բացի այդ, կա նաև կայք: Բոլորների մեծածավալ տրանսպորտային պլանի շրջանակներում, վաճառանքներով և անցումային շրջանով - նոր ավտոկայանման ռազմավարություններ կայացնելու միասնական միտեցում կա:

Նոր կայանման ռազմավարություն իրազեկման ջանքերի շնորհիվ, որը նախկինում գոյություն չուներ, մեծոր է նրանի երկարամյա անցումային շրջան, ինչպես նաև քաղաքապետարանի կողմից ամփոփման հանդիման հաղորդակցում տարբեր ուղիներով ավտոկայանման բնակչությանը համաձայն համար:



AB-C ինդեքս	A (Իրազեկման քարտեզավարողակ)	B (Չափավոր-կամ թիրախավորված իրազեկում)	C (Իրազեկման ցածր քանակարդակ)
-------------	------------------------------	--	-------------------------------

5.3.7 Գործառնական առաջարկությունների ամփոփում

	Ներկայիս (2018)	Կարճաժամկետ (2019-2023)	Երկարաժամկետ (2024-2028)
Գործառնական			
Տեխնոլոգիական մակարդակ	Կորածնի միջին	B	B
Կիրարկում	Կորածնի միջին	B	B
Բացառություններ	C	B	B
Կառավարում	Կորածնի միջին	B	B
Իրավական պահանջներ	C	A	B
Հանրային իրազեկում	Կորածնի միջին	B	B

5.4 Ռազմավարության ամփոփում

	Ներկայիս (2018)	Կարճաժամկետ (2019-2023)	Երկարաժամկետ (2024-2028)
Ռազմավարական			
Տրանսպորտ	C	C	B
Երթևեկություն և հասանելիություն	C	A	A
Եկամտաբերություն	C	B	A/B
Մարտավարական			
Աշխարհագրական ընդգրկում	C	B	B
Կայանման գոտիներ	Կիրառելի չէ	C	B
Ժամկետներ	C	B	B
Մակագնի կառուցվածք	Կիրառելի չէ	C	B
Գործառնական			
Տեխնոլոգիական մակարդակ	Կիրառելի չէ	B	B
Կիրարկում	Կիրառելի չէ	B	B
Բացառություններ	C	B	B
Կառավարում	Կիրառելի չէ	B	B
Իրավական պահանջներ	C	A	B
Հանրային իրազեկում	Կիրառելի չէ	B	B

6 Ընտրված ավտոկայանման ռազմավարության վերլուծություն

6.1 Երկարաժամկետ կենսունակություն

Բաժին 5-ում ներկայացված վերլուծության և ռազմավարության համաձայն՝ կարելի է տեսնել, որ Ծրագիրը կանխատեսվում է կարճաժամկետ հատվածի համար մինչև 2023 թ., իսկ 2024 թ. -ից մինչև 2028 թ.-ը երկարաժամկետ հատվածի համար, իսկ երկարաժամկետ կենսունակությունը կախված է Ծրագրի արդյունավետ իրականացումից գործունեության առաջին տարիների ընթացքում:

Քոլոր չափորոշիչների վերլուծությունը հնարավորություն է տալիս ճկուն մոտեցում որդեգրել և հետագայում զարգացնել գործունեության հաջորդ տարիների ընթացքում կառավարման մոտեցման փոփոխման, կարգավորող միջավայրի, տեխնոլոգիական լուծումների և այլ չափորոշիչների միջոցով: Այս առաջադեմ փոփոխությունը կբարելավի ռազմավարությունը ընդհանուր առմամբ և աստիճանաբար կվերցնի միջազգային լավագույն փորձը, երբ բնակչությունը կընտելանա վճարովի ավտոկայանատեղերի հայեցակարգին:

6.2 Սոցիալ-ժաղովրդագրական ազդեցություն

Սկզբում համայնքի բնակիչները՝ հիմնականում տրանսպորտային միջոցների սեփականատերերը, կզգան ավտոկայանատեղերի համար վճարելու հետ կապված անհարմարություններ, քանի որ այդ քաղաքականությունը նախկինում չի եղել: Սակայն, ինչպես արդեն նշվել է այս հաշվետվության մեջ, կիրարկման քաղաքականությունը համեմատաբար «մեղմ» կլինի պատժամիջոցների առումով՝ հաշվի առնելով բնակչության սովորություններն ու անհարմարությունները: Կիրարկման առաջին փուլը հիմնականում կներառի նախազգուշացումներ, այլ ոչ թե տույժեր, մինչև բնակչությունը կընտելանա համայնքի՝ վճարովի ավտոկայանման քաղաքականությանը: Հետևյալ միջոցները կնպաստեն տրանսպորտային միջոցների սեփականատերերի կողմից կիրարկման քաղաքականության ընդունմանը.

- Առաջարկվող տուգանքի չափը (2000 ՀՀ դրամ) պակաս է Երևանում կիրառվող տուգանքի չափից (5000 ՀՀ դրամ):
- Մեկ շաբաթվա ընթացքում տուգանքը վճարելու դեպքում առաջարկվող զեղչային քաղաքականությունը (50%) նույնպես կխրախուսի վարորդներին վճարել տուգանքը, այլ ոչ թե գնալ դատարան:

Առավելություններն առանց ավտոմեքենայի մարդկանց համար (հիմնականում հետիոտներ)

- Փողոցային ավտոկայանումը մեծացնում է փողոցում դրական «շփումը» և կարող է նեղացնել հետիոտնի համար փողոցների անցման արդյունավետ հատվածի լայնությունը: Երկուսն էլ խթանում են ավելի դանդաղ երթևեկություն՝ չնայած, որ Գյումրու փողոցները չափազանց լայն չեն:
- Ավտոկանառությունը կարող են նաև բուֆեր հանդիսանալ ավտոտրանսպորտային երթևեկության և մայթերի երկայնքով շարժվող հետիոտների միջև և բարձրացնել

հետիոտների անվտանգությունը՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս անվտանգության խնդիրը դիտարկվում է և ներկայացվել է Դիագնոստիկ հաշվետվությունում:

- Բացի այդ, ձեռնարկությունները, որոնք ապավինում են փողոցային ավտոկայանման վրա, տեղակայվում են ավտոկայանատեղերի դիմաց և միտում ունեն տեղակայվելու հետիոտնային մոտեցերի մոտ. ավելի հավանական է, որ այդ ձեռնարկություններն իրենց շենքերը տեղակայեն մայթերին մոտ: Այս ուշադրությունը կարող է նպաստել նաև Գյումրու համար ավելի աշխույժ հետիոտնային առևտրային միջավայրի ստեղծմանը:
- Փողոցային ավտոկայանատեղերը կարող են ծառայել որպես երթևեկության հոսքի մեղմացնող միջոց, եթե վարորդները շարժվեն չափազանց բարձր արագությամբ զբաղված փողոցներով: Մայթեզրի և շարժվող երթևեկության միջև բռնի հանդիսանալով՝ փողոցային ավտոկայանատեղերը կարող են աջակցել անվտանգ և հարմարավետ հետիոտնային միջավայրի ապահովմանը, որը լրացում է վերը նշված 2-րդ կետին:

6.3 Ֆինանսական կենսունակություն

Այս հաշվետվության առումով առաջարկվող ավտոկայանման ռազմավարության ֆինանսական ազդեցությունը գնահատելիս կատարվել են մի շարք ենթադրություններ: Այս բաժնում ներկայացված հաշվարկները կատարվել են այդ ենթադրությունների հիման վրա: Ստորև ներկայացված են որոշ ընդհանուր ենթադրություններ, և որոշ առանձնահատուկ ենթադրություններ ներկայացված են հաջորդիվ այս բաժնում տեղ գտած յուրաքանչյուր հաշվարկի վերաբերյալ:

Ընդհանուր ենթադրություններ

- Բոլոր հաշվարկները կատարվել են ԱՄՆ դոլարով ներկայացումը և համեմատությունները հեշտացնելու նպատակով՝ 2.07.2018 թ. ի դրությամբ (1 ԱՄՆ դոլար = 482.49 ՀՀ դրամ) ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված փոխարժեքի հիման վրա
- Ենթադրվել է, որ դրամ/դոլար փոխարժեքը կայուն է կանխատեսվող ժամանակահատվածի համար:
- Տարի 1 = 2019, և կանխատեսվող ժամանակահատվածը ներառում է 10 տարի՝ 2019-2028 թ.թ.
- Տարի 0 = 2018, բազային տարի է, և ենթադրվում է, որ 3 ամիս տևողությամբ նախապատրաստական գործողությունների համար որոշ գործառնական ծախսեր և անհրաժեշտ բոլոր կապիտալ ծախսերը կատարվում են 0 տարվա ընթացքում
- Վերլուծությունն իրականացվել է 2 սցենարով՝
 - "սովորական"
 - "լավատեսական"
- Եկամուտների հաշվարկը հիմնված է երկու սցենարների համար կանխատեսված տրանսպորտային միջոցների քանակի վրա, ինչպես ներկայացված է սույն հաշվետվության 4.2 բաժնում 5-րդ բաժնում ներկայացված բջջային հավելվածների և ֆիզիկական պիտակների օգտագործմամբ, ինչպես նաև արտափողոցային ավտոկայանատեղերի հնարավոր օգտագործմամբ:

Ներդրումային պլան

Ծրագրի ընդհանուր մշակման և Գյումրիում նախատեսվող ավտոկայանման ռազմավարության իրականացման համար ներդրումների անհրաժեշտությունը վերլուծվել է հորիզոնական կողմից և ներկայացված է ստորև:

Ներդրումների հետևյալ տեսակներն են առանձնացվել՝

- Պահանջվող ներդրումներ նյութական հիմնական միջոցների համար
- Անհրաժեշտ ներդրումներ ոչ նյութական հիմնական միջոցների համար
- Պահանջվող ներդրումներ պայմանական կապիտալ ծախսերի համար նախորդ 2 կատեգորիաների 25% -ի չափով:

Ակտիվների յուրաքանչյուր կատեգորիայի համար պահանջվող ներդրումների, ինչպես նաև անհատական ծախսերի վերաբերյալ նախնական վերլուծությունը մանրամասնորեն ցուցակված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 6.1. Ծրագրի համար անհրաժեշտ հիմնական միջոցներ - «Սովորական» սցենար

Հիմնական միջոցներ	Տարրեր	ԱՄԼ դոլար
Ցուցանակ	216	32,400
Կայք	1	2,691
Առցանց վճարային համակարգ և սպասարկում	1	2,691
Բջջային հավելվածներ Android և IOS-ի համար	2	6,466
Ծրագրային ապահովում	1	3,509
Ճանաչման սերվեր	1	18,611
LPR լուծումով պլանշետներ	6	12,000
Գրասենյակային համակարգիչներ	2	1,511
Կահույք		431
Ընդամենը		80,742

Աղյուսակ 6.2. Ծրագրի համար անհրաժեշտ հիմնական միջոցներ - «Լավատեսական» սցենար

Հիմնական միջոցներ	Տարրեր	ԱՄՆ դոլար
Ցուցանակ	216	32,400
Կայք	1	2,691
Առցանց վճարային համակարգ և սպասարկում	1	2,691
Բջջային հավելվածներ Android և IOS-ի համար	2	6,466
Ծրագրային ապահովում	1	3,509
Ճանաչման սերվեր	1	18,611
LPR լուծումով պլանշետներ	8	16,000
Գրասենյակային համակարգիչներ	2	1,511
Կահույք		431
Ընդամենը		84,742

Ներդրումների համապատասխան ժամանակացույցը՝ հիմնված համապատասխանաբար կիրառված մաշվածության դրույքաչափերի վրա, ներկայացված է ստորև.

Աղյուսակ 6.3. Ներդրումների ծրագիր - «Ավտոական» սցենար

	Տարր 0	Տարր 1	Տարր 2	Տարր 3	Տարր 4	Տարր 5	Տարր 6	Տարր 7	Տարր 8	Տարր 9	Տարր 10
Ցուցանակ	32,400										32,400
Կայք	2,691										
Առցանց վճարային համակարգ և սպասարկում	2,691										
Բջջային հավելվածներ Android և IOS-ի համար	6,466										
Ծրագրային ապահովում	3,509										
Ճանաչման սերվեր	18,611					18,611					18,611
LPR լուծումով պլանշետներ	12,000			12,000			12,000			12,000	
Գրասենյակային համակարգիչներ	1,511					1,511					1,511
Կահույք	431,097,018					431,097,018					431,097,018
Պայմանական ներդրումներ	20,078										
Ընդամենը կապիտալ ներդրումներ	100,368	-	-	12,000	-	20,553	12,000	-	-	12,000	52,953

Աղյուսակ 6.4. Ներդրումների ծրագիր - «Լավատեսական» սցենար

	Տարի 0	Տարի 1	Տարի 2	Տարի 3	Տարի 4	Տարի 5	Տարի 6	Տարի 7	Տարի 8	Տարի 9
Ելուցանակ	32,400									32,400
Կայք	2,691									
Առցանց վճարային համակարգ և սպասարկում	2,691									
Բջջային հավելվածներ Android և IOS-ի համար	6,466									
Ծրագրային ապահովում	3,509									
Ժամային սերվեր	18,611					18,611				18,611
ԼՍՐ լուծումով պլանշետներ	16,000			16,000			16,000			16,000
Գրասենյակային համակարգիչներ	1,511					1,511				1,511
